

ՀՈՒՅՄ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

لویس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446



Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Խորհրդային Հայաստանի 94-ամյակը.....1
- 2- Իրանահայ Համայնք.....11
- 3- Հայաստան.....14
- 4- Արցախ.....17
- 5- Արեւմտյան Հայաստան.....23
- 6- Միլիտոք.....25
- 7- Միջազգային.....26
- 8- Խոհեր.....26
- 9- Գծանկարչություն.....27
- 10- Առածանի.....27

Պարսկերեն բաժին

- 1- Հայ բնակչության նվազման պատճառները.1-3
- 2- Լուրեր.3-5

Ճապիկի առաջին էջում՝ Դեպի Արցախ

Վերջին էջում՝ Լույս են տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 193, Նոյեմբեր 2014 թ.

No. 193, November 2014

ماهنامه لویس - شماره ۱۹۳ آذر ماه ۱۳۹۳

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատվածաճառ - 5000 ռիալ

Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

«Հայաստան» հիմնադրամի 17-րդ հեռուստամարաթոնի արդյունքը՝ 12 399 550 դոլար



Հեռուստամարաթոն 2014-ն արձանագրեց 12 399 550 ԱՄՆ դոլարի նվիրատվություն եւ նվիրատվության խոստում:

Հիմնադրամի մամուլի ծառայությունից հայտնում են, թե հավաքագրված գումարը կուղղվի հայկական երկու հանրապետություններն իրար կապող շուրջ 116կմ երկաթուղամբ Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի սափալտապատմանն ու հարդարմանը, ինչպես նաեւ բարերարների կողմից ընտրված հատուկ ծրագրերին Հայաստանում եւ Արցախում:

Նշենք, որ նոյեմբերի 19-ից 23-ը Ֆրանսիայում տեղի է ունեցել Հիմնադրամի 15-րդ համաեվրոպական դրամահավաք-հեռախոսամարաթոնը, որն արձանագրել է ավելի քան 1.37 միլիոն եվրո նվիրատվություն եւ նվիրատվության խոստում:


Խորհրդային Ֆլագսզնի հիմնադրման 94-ամյակի
պոթով¹

Հայաստանում Խորհրդային վարչակազմի հաստատումը

Մայիսյան ապստամբության ճնշումից հետո Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները, շարունակելով դեկա-վարել Հայաստանի աշխատավորների պայքարը սովետական իշխանության հաստատման համար, անցան ընդհատակ: Գրեթե ամեն օր բյուրոն նիստեր էր ունենում, կազմակերպվեց «Կարմիր խաչը» որը կապված էր կալանավորված կոմունիստների հետ: Վերականգնվում էին կապերը շրջանների հետ, տեղերում կազմակերպությունները վերականգնելու նպատակով:

Կուսակցական կազմակերպությունների աշխատանքը ուժեղացնելու նպատակով ՌԿ(Բ)Կ Կենտկոմի կողմից բյուրոյի համաձայնությամբ 1920 թ. ամռանը ստեղծվում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների արտա-սահմանյան բյուրո, որը որոշ ժամանակ աշխատում է Թիֆլիսում, իսկ հետո՝ մենշևիկների կողմից սկսած հալածանքների պատճառով, ստիպված է լինում իր գործունեությունը շարունակել Բաքվում:

1920 թվականի հունիսի 30-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի կողմից բյուրոյի միջնորդությամբ, Վրաստանում, Հայաստանում (ՀԿԿ), եւ Ադրբեջանում ստեղծվեցին կոմունիստական կուսակցություններ: ՀԿԿ մեծ աշխատանք կատրեց տեղական կազմակերպությունների ամրապնդման, նորորի ստեղծման եւ ժողովրդական ապստամբության նախապատրաստելու ուղղությամբ:



1920 թ. սեպտեմբերին կոմկապյան բյուրոն հաստատում է ՀԿ(Բ)Կ Կենտկոմի կազմը, որի մեջ են

մտնում Ի. Դովլաթյանը, Ա. Նուրիջանյանը, Հ. Կոստանյանը, Ս. Տեր-Գրիգորյանը, Ա. Խանջյանը²:

Հայ-թուրքական պատերազմի հետեւանքով Հայաստանի դրությունն էլ ավելի ծանրացավ: Գյուղատնտեսական աշխատանքները երկրում կանգ էին առել դեռեւս աշնանից՝ աշխատող ձեռքերը պատերազմի կապակցությամբ բանակ կանչելու հետեւանքով: Գաղթականների հոսքը Հայաստան, թանկությունը, հասարակական-կենցաղային եւ զանազան այլ խնդիրներ շափազանց ճնշման տակ էր դրել ժողովրդին: Հոկտեմբերի 15-ին կառավարական տեղեկագիրը հայտնում էր, որ «Կյանքը Հայաստանում անդադար կռիվների ու հաղորդակցության անկանոնության պատճառով արագորեն թանկանում է եւ որ հունձքը չտվեց սպասված արդյունքն ու հացի սատիկ ճգնաժամ է նկատվում»³:

Հետզհետե ժողովուրդը ըմբռնում է, որ այդ ճգնաժամից փրկվելու միակ ճանապարհը, երկրում խորհրդային իշխանության հաստատումն էր:

1920 թ. հոկտեմբերի առաջին օրերին Հայաստանի Կ(Բ)Կ-ի Կենտկոմը դիմեց Հայաստանի բանվորներին եւ գյուղացիներին՝ կոչելով նրանց համախմբվել կոմունիստական կուսակցության շուրջը եւ Հայաստանում հաստատել սովետական իշխանություն⁴:

Ապա տեղի է ունենում Ալեքսանդրապոլի եւ Երեւանի երկաթուղու բանվորներն նոյոմբերին կարողանում են գործադուլ կազմակերպել:

1920 թ. նոյոմբերի 12-ին Սովետական Ադրբեջանի սահմանի մոտ գտնվող Հայաստանի գործադուլների հրամանա-տար գեներալ Խանկալամովը տազնապով հայտնում է, որ նոյեմբերի 10-ին «... 6-րդ գնդի 4-րդ վաշտի հիսուներկու զինվոր գեներալ եւ հանդերձանքով ինքնակամ կերպով թողել են իրենց պահակակետը եւ, հավանորեն, անցել հակառակորդի (այսինքն սովետական զորամասերի) կողմը»: Նոյեմբերի 28-ին Դիլիջանից հաղորդում են կառավարությանը, որ «... ռազմամիջիցիոնական գնդի 6-րդ, 2-րդ եւ 1-ին վաշտերի զինվորները թողնելով դիրքերը՝ գնացել են իրենց տները: Այսօր 5-րդ եւ 3-րդ վաշտերը թողին դիրքերը եւ հեռացան»: Տեղերից ստացված նման լուրերի հետեւանքով դրությունը Երեւանում էլ ավելի է լարվում⁵:

Ձգտելով կանխել աշխատավորների մոտալուտ ապստամբությունը, դաշնակցական կառավարությունը դիմում է արտակարգ միջոցների. հիմնում է զինվորական դատարաններ, բանդարկում կոմունիստներին, հեղափոխական բանվորներին եւ գյուղացիներին, հետադիմական տարրերից կազմակերպում է պատժիչ խմբեր եւ այլն: Նոյեմբերի 19-ին Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը դաշնակցական կառավարության նախագահի հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարում է, որ Հայաստանի բանտերում գտնվում են մոտ 400 կոմունիստներ⁶:

1920 թ. նոյեմբերի 28-ին Զիյերինին գրած նամակում դաշնակցության կուսակցության քայքայման փաստը նշել է Լեգրանը: «Ես կարծում եմ, որ դաշնակցության կուսակցության ներսում խոր խմորումների նշանները առկա են: Պարզորոշ երևում է պառակտման գիծը...»⁷:

² - ՀԺՊ, հ. 7, էջ 113:

³ - ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մասն 2, թ. 394: (ՀԺՊ, հ. 7, էջ 114):

⁴ - Կոմունիստ, 1920, համար 124: Նույն տեղում, էջ 115:

⁵ - ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 262, 396:

⁶ - Նույն տեղում, թ. 332-336:

⁷ - ՀԺՊ, հ. 7, էջ 117:

¹ - Էդիկ Բաղդասարյան (Էդ. Գերմանիկ), Հայ Պետականության Պատմություն, Հ. 5, Տորոնտո 2013, էջ 7-21, 209-230:



Ա. Մուսլյան, Ա. Կասյան, Ա. Տեր-Գաբրիելյան



Ա. Նուրիջանյան, Ա. Բեկզադյան, Բ. Դովաթյան

պատմության մեջ սկսվեց նոր դարաշրջան կոմունիզմի դարաշրջանը:

Ու(Բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի նիստում Հ(Բ)Կ Կենտկոմի անդամների մասնակցությամբ քննարկվում է Հայաստանում ապստամբության նախապատրաստման հարցը: Նույններին Հ(Բ)Կ Կենտկոմի կազմի մեջ են մտնում նաև Ա. Կասյանը, Ա. Տեր-Գաբրիելյանը և Ալ. Բեկզադյանը:

1920 թ. նոյեմբերին 29-ին Քարվանսարայի (Իջևանի (և Դիլիջանի շրջանների աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ապստամբություն բարձ-րացրին: Այն անմիջականորեն ղեկավարելու համար ստեղծվեց Հայաստանի հեղափոխական կոմիտե, որի կազմի մեջ մտնում էին Ա. Կասյանը (նախագահ), Ա. Տեր-Գաբրիելյանը, Ա. Մուսլյանը, Ալ. Բեկզադյանը, Բ. Դովաթյանը և Ա. Նուրիջանյանը: Այդ շրջաններում գտնվող կառավարական գործերը անցնում են ապստամբների կողմը: Նույնների 29-ին Քարվանսարան արդեն ապստամբների ձեռքում էր:

Նույն օրը, նոյեմբերի 29-ին, Հեղափոխական կոմիտեն հանդես է գալիս Հայաստանը սովետական սոցիալիստական հանրապետություն հայտարարելու մասին հայտարարությամբ: Նույնների 30-ին ապստամբները մտնում են Դիլիջան: Նույն օրը Հեղկոմը հեռագիր է ուղարկում Լենինին և օգնություն խնդրում⁸:


Ի պաշտպանություն՝ Ադրեջանում գնտվող 11-րդ բանակի զորամասերին հրահանգվում է օգնել ապստամբներին՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու ուղղությամբ: Հարկ է նշել, որ այդ զորամասերի շարքերում էին գտնվում Մայիսյան ապստամբության ճնշումից հետո դաշնակցա-կանների կողմից սկսված հալածանքների հետևանքով Սովետական Ադրբեջան անցած Իջևանի, Դիլիջանի, Շամշադինի և մի քանի ուրիշ շրջանների ապստամբության մասնակիցներից կազմված հայկական դուռնը, որը կազմակերպվել էր Բաքվում 1920 թվականի կեսերին Հ(Բ)Կ Կենտկոմի ղեկավարությամբ և 11-րդ բանակի ռազմա-հեղափոխական

խորհրդի օգնությամբ: 1920 թ. նոյեմբերի 30-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն Չիչերինին հայտնում էր. «Հայկական զորամասերն անցնում են ապստամբների կողմը և մինչև հիմա էլ մի կրակոց չի եղել»⁹: Այլ վկայություններ հաստատում են նույնը:



Ա. Կասյան (1876-1937)

1920 թ. դեկտեմբերի 2-ի Սարգիս Կասյանին ուղարկված հեռագրում Վ. Լենինը ջերմորեն ողջունեց Հայաստանի Կ(Բ)Կ-ին՝ նրա հաղթանակի և Սովետական Հայաստանի ստեղծման առթիվ:



Սովետական Հայաստանի հռչակագիրը, 1920 թ. Նոյեմբերի 29¹⁰


⁸ - Ջոն Կիրակոսյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972, էջ 461:

⁹ - ՄԼԻՍ ԿԿԱ, Թ. 85, գ. 14, թ. 12-13 (ՀԺԴ, հ. 7, էջ 119-120):

¹⁰ - Հայ Ժողովրդի պատմություն, Լույս հրատ. Երևան 1985, էջ 82:



Հայաստանում հռչակված խորհրդային իշխանությունը գործում էր հեղափոխական կոմիտեների (Հեղկոմ) միջոցով: Հեղկոմները իշխանության ժամանակավոր, նշանակովի մարմիններ էին եւ պահպանվեցին մինչեւ, խորհուրդների ընտրությունների անցկացումը:



Վ.Էնինի Հեռագիրը Հայաստանի Հեղկոմի նախագահ՝ Ս. Կասյանին¹¹



Կարմիր բանակի մատերի ելեւան

Հայաստանի Ռազմհեղկոմը, ղեկոնեմքերի 6-ին ժամանելով Երևան, ամբողջ իշխանությունը վերցրեց իր ձեռքը: Նրա նախագահն էր հայտնի բոլշևիկ Սարգիս Կասյանը:

Հեղկոմներ ստեղծվեցին ամբողջ երկրում: Դրանք օրենսդիր եւ գործադիր մարմիններ էին, որոնք ընդունում էին նաեւ օրենքի ու ժ ունեցող ղեկրեւներ: Իրականում խորհրդային իշխանության քաղաքականությունը մշակվում էր կոմունիստական կուսակցության կողմից, որը եւ կառավարում էր երկիրը:

Վերացվեց հին պետական համակարգը եւ ստեղծվեց նորը, կազմավորվեցին գավառային (թվով 9) եւ շրջանային (ավելի քան 30), ինչպես նաեւ գյուղական հեղկոմներ: Հայաստանի Հեղկոմի առաջին ղեկրեւը վերաբերում էր Արտակարգ հանձնաժողովի (Չեկա՝ Չրեզվիչայնայա կոմիսիա) ստեղծմանը, մի մարմին, որը կոմունիստական կուսակցության ձեռքին գործիք ծառայեց իր իշխանությունն ամրապնդելու եւ, այսպես կոչված, հակահեղափոխության դեմ պայքարելու համար: Հին դատական համակարգին փոխարինելու եկան «ժողովրդական դատարանները» եւ «հեղափոխական տրիբունալը»: Վերացվեցին Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքները, որոնց փոխարինեց Խորհրդային Ռուսաստանի օրենսդրությունը:

Հեղկոմները գոյատևեցին շուրջ մեկ տարի, որից հետո նրանց փոխարինեցին ընտրովի խորհուրդները: Խորհրդային իշխանությունը իր ամրապնդման համար այլախոհների նկատմամբ դիմեց բռնության: Հայաստանում կրկնվում էր Խորհրդային Ռուսաստանի փորձը: Առաջին զանգվածային բռնությունները տեղի ունեցան նոր իշխանության հաստատումից անմիջապես հետո: Դրանք կիրառվեցին Դաշնակցություն կուսակցության, պաշտամենտի ու նախկին կառավարության անդամների եւ բանակի սպայության նկատմամբ: Ծառայությունից ազատվեց եւ Հայաստանից հեռացվեց բանակի հրամանատար Դրոն:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմում եւ Հայաստանի Ռազմհեղկոմում տարբեր վերաբերմունք դրսևորվեց Դաշնակցություն կուսակցության եւ ընդհանրապես հայ մտավորականության նկատմամբ: Դեկավար գործիչների մի մասը (Ա. Մռավյան, Ս. Կասյան) կողմնակից էր մեղմ վերաբերմունքի, իսկ մյուսը պաշտպանում էր կոշտ քաղաքականությունը: Վերջինների մեջ աչքի էին ընկնում զինվորական գործերի ժողկոմ Ավիս Նուրիջանյանը եւ Ռուսաստանից գործուղված չեկիստ Գեորգ Աթաբեկյանը: Հիշյալ տարածայնությունները, սակայն, չհանգարեցին, որ Հայաստանում եւս գործադրվեն բռնություններ: 1920 թ. ղեկոնեմքերին եւ 1921 թ. հունվարին Հայաստանի բանակի շուրջ 1400 սպաներ ժամանակավորապես արտաքսվեցին երկրից կամ արգելափակվեցին:

Բռնություններն ավելի լայն ծավալ ընդունեցին ռազմական կոմունիզմի քաղաքականությունը կիրառելիս: Ռազմական կոմունիզմը տնտեսական միջոցառումների համակարգ էր, որը բացառում էր քաղաքի եւ գյուղի միջեւ ապրանքափոխանակության կազմակերպումը եւ շուկայական հարաբերությունները: Իրականում՝ պարենմասնատրումը վերածվեց ժողովրդի, առաջին հերթին՝ գյուղացիության կողոպուտի: Այն իր նպատակին չհասավ, չբավարարվեցին ո՛չ բանակի, ո՛չ էլ քաղաքի կարիքները: Գյուղացու չնչին ունեցվածքի եռազրավումը նպաստեց միայն սովի եւ դժգոհության տարածմանը երկրում: Դժգոհություններն ավելի խորացան, երբ 1921 թ. փետրվարին կատարվեցին նոր ձերբակալություններ ու զնդակահարություններ: Բողոքը եւ դժգոհությունները սաստկանում էին: Երկիրը գտնվում էր ապստամբության եւ

¹¹ - Նույն տեղում, էջ 84, նաեւ Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ. էջ 462:

քաղաքացիական պատերազմի նախօր-յակին: Նոր իշխանության հասած բոլշևիկները միա-պետություն ստեղծելով՝ նույն սխալը գործեցին՝ ինչ գործեց Դաշնակցությունը, այդ օրերին ժողովուրդը բնականաբար կարիք ուներ խաղաղության եւ ազգային համերաշխության: Սակայն Հայ ժողովուրդը չունեւ ոչ մի այլընտրանք, պետք է բավարարվեր նվազագույն չարիքով: Ծայրահեղությունները հասարակական-քաղաքական եւ տնտեսական բնագավառներում սովորաբար երկիրը տանում են արկածախնդրությունների եւ կործանման: Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը գործադրվել էր Ռուսաստանում 1918-1920 թթ. քաղաքացիական տարիներին: Այն իր վախճանի շրջանում էր, երբ փոխադրվեց Հայաստան:

1920 թ. դեկտեմբերի 10-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմը դիմեց գյուղի բոլոր աշխատավորներին, հայտնելով, որ կառավարությունը Հայաստանի սահմաններում հայտարարել է «հացահատիկի կամավոր հավաքում»:

Սակայն հարկ է նշել, որ այդ բռնություններին ու բռնագրավումներին ու երբեմն ահաբեկչություններին թեւ ու թիկունք էին կանգնում իրենք՝ ընդհատակյա անցած դաշնակ-ցականները կոմունիստներին վարկաբեկելու համար: Այդ կապակցությամբ պահպանվել են բազմատիվ արխիվային փաստեր եւ վկայություններ¹²:

Տնտեսության վերականգնումը Խորհրդային Հայաստանում

Նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ)

Քաղաքացիական կռիվների ավարտից հետո Խորհրդային Հայաստանը ձեռնամուխ եղավ քայքայված տնտեսության վերականգնման գործին: Դրան ծառայելու եկավ Նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ): Այն իրականացվել էր Ռուսաստանում 1921 թ., այն բանից հետո, երբ ռազմական կոմունիզմի քաղաքականությունը ճգնաժամային իրադրու-թյուն էր ստեղծել ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բնագավառներում:



ՆԷՊ-ը տնտեսական միջոցառումների համակարգ էր, որտեղ կենտրոնականը պարենային հարկն էր: ՆԷՊ-ով հնարավորություն, նյութական խթաններ էին ստեղծվում շուկայական հարաբերությունների հիման վրա տնտեսությունը վերա-կանգնելու եւ զարգացնելու համար: Շուկայի միջոցով աշխու-ժանալու էին ապրանքադրամական հարաբերությունները արդյունաբերության ու գյուղատնտեսության՝ քաղաքի ու գյուղի միջև: ՆԷՊ-ի վերջնական նպատակն էր, ըստ Վ. Լենինի, հասնել սոցիալիզմի կառուցմանը:

Հայաստանում ՆԷՊ-ին անցումը տեղի ունեցավ աստիճանաբար: 1921 թ. գարնանը եւ ամռանն ընդունվեցին մի շարք դեկրետներ, իսկ հունիսին ընդունվեց որոշում պարենհարկի մասին: ՆԷՊ-ը նյութական շահագրգռություն էր տալիս գյուղացուն եւ բոլոր մյուս արտադրողներին՝ ազատորեն տնօրինելու արտադրանքը եւ վաճառքը:

Տնտեսական շահագրգռությունն արտահայտություն էր գտնում հարկային քաղաքականության մեջ: Սահմանված հարկը վճարելուց հետո մնացած բերքը գյուղացին տնօրինում էր ազատորեն: Հարկման հիմքում դրված էր եկամտային սկզբունքը: Հարկը բարձրանում էր ըստ եկամտի ծավալի մեծության, իսկ չքավորներն ազատվում էին հարկից¹³:

Հողային հարցը

Հողի մասին դեկրետն ընդունվեց 1920 թ. դեկտեմբերի 28-ին: Այդ դեկրետի, ապա 1923 թ. ընդունված հողային օրենսգրքի համաձայն բռնագրավվեցին կալվածատիրական հողերը, կատարվեց բոլոր հողերի ազգայնացում: Այնուհետեւ դրանք բաժանվեցին գյուղացիական տնտեսությունների միջև, որոնց ընդհանուր թիվը 1920-ական թվականների վերջին հասնում էր շուրջ 180 հազարի:



Հողային հարցի լուծման կարեւոր խնդիրներից էր մեծաթիվ գաղթական բնակչության ապահովումը, որը լրացուցիչ դժվարություն էր ստեղծում առանց այն էլ հողասակավ երկրի համար: Ստեղծված պայմաններում հողով բավարարվեցին ոչ բոլոր գյուղացիները: 1929 թ. ավելի քան 40 հազար գյուղաբնակներ շարունակում էին մնալ հողազուրկ:

Խորհրդային օրենքներով հողը գյուղացուն ամրագրվում էր ձրի եւ պարբերական վերաբաժանման սկզբունքով: Խորհրդային իշխանությունն անհատական տնտեսությունը դիտում էր որպես ժամանակավոր երեւույթ, քանի դեռ չէր

¹² - ՀՅԴ-ը եւ Խորհրդային իշխանությունը, Փաստերի եւ նյութերի ժողովածու, խմբագիր՝ Վ.Ն. Ղազարխանյան, Երեւան 1999, էջ 46-47, 209-210, եւ այլն:

¹³ - Հայոց Պատմություն, Երեւան, 1994, էջ 297-298:

նախապատրաստվել անցումը սոցիալիստական տնտեսություն-ներին:

Հայաստանի տնտեսության վերականգնմանը նպաստում էր նաև Ռուսաստանի օգնությունը: Առաջին օգնությունը ստացվեց 1921 թ. մարտին, երբ ինքնաթիռը Հայաստան փոխադրեց 47 կիլոգրամ ոսկի: Այն օգտագործվեց Իրանից հաց գնելու համար: Իսկ 1921 թ. մայիս-նոյեմբեր ամիսների ընթացքում Սովետական Ռուսաստանը օգնության կարգով Հայաստան ուղարկեց 1,545 հազար ռուբլի ոսկեդրամ, 426 հազար փութ հացահատիկ եւ այլուր, 50 հազար փութ ձուկ, 7000 փութ շաքար, 7 վագոն բրինձ, 1.5 միլիոն արշին մանուֆակտուրա, 10,173 գյուղատնտեսական գործիքներ, 12 վագոն դեղորայք, 12 հազար ձեռք գինվորական հանդերձանք, մի քանի հարյուր հազար գիրք, հազարավոր փթեղով թուղթ, ոսկով 100 հազար ռուբլու արժողությամբ հագուստեղեն, մեծ քանակությամբ հեռախոսային եւ հեռագրական ապարատներ ու սարքավորում, 2 տպարանի, 1 ցինոգրաֆիայի, 1 վիմագրատան եւ 2 կազմատան սարքավորումներ, մեծ քանակությամբ լծկան անասուններ, ավտոմեքենաներ, եւ այլն: Նույն ժամանակաշրջանում օգնության կարգով Սովետական Ադրբեջանից Հայաստան է ուղարկվել 1,177 հազար փութ վառելանյութ (մագուտ, նավթ, բենզին, մեքենայի յուղ):

1921 թվականի սկզբներից մինչև 1922 թվականի սկիզբը Սովետական Ռուսաստանից ստացած միայն դրամական օգնությունը, ըստ Ալ. Մյասնիկյանի զեկույցի, կազմել է 3.5 միլիոն ռուբլի ոսկով: Իսկ Ռուսաստանից ստացվել է 2,895 հազար փութ կենսամթերք եւ զանազան ապրանքներ:

Սովետական Հայաստանի Ժողովրդական կոմիսարների 1922 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ Սովետական Ռուսաստանի կողմից օգնության կարգով Հայաստան ուղարկված 75 հազար ռուբլին (ոսկով) հատկացվում է տվյալներին օգնելու ֆոնդին: Բացի դրանից, նույն որոշմամբ այդ ֆոնդի համար կառավարության միջոցներից հատկացվում է եւս 300 հազար ռուբլի (ոսկով):

Ոչ լրիվ տվյալներով 1922 թվականի ընթացքում Սովետական Ռուսաստանից օգնության կարգով Հայաստան է ուղարկվել 1.5 միլիոն ռուբլի ոսկով, բացի դրանից, յուրաքանչյուր ամիս 166 հազար ռուբլի ոսկով՝ որպես դոտացիա, ավելի քան 110 վագոն հացահատիկ, 11 վագոն շաքար, 7 վագոն դեղորայք, մեկ տոբստիլ ֆաբրիկայի սարքավորում՝ 18 հազար իլիկով, 25 վագոն մանուֆակտուրա եւ մեծ քանակությամբ այլ տեսակի կենսամթերքներ, ապրանքներ ու սարքավորումներ¹⁴:

Vineyards at the foot of Ararat



Խաղողի այգիները Արարատյան դաշտում

Ռուսաստանը օգնություն էր ցույց տալիս կադրերով եւ այլ միջոցներով: Շնորհիվ այդ օգնության եւ տնտեսական տարվա համեմատաբար հաջող արդյունքների, որոշ չափով բարելավվում է հանրապետության վիճակը:


Նեպի եւ մյուս միջոցառումների շնորհիվ վերականգնվեցին գյուղատնտեսությունը եւ արդյունաբերությունը: 1928թ. Հայաստանի տնտեսությունը հասավ նախապատերազմյան՝ 1913 թ. մակարդակին:



Սարգիս Լուկաշին (Սրապիոնյան, 1881-1937)

Հայաստանի տնտեսական շինարարության գործում մեծ աշխատանք կատարեց Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան, 1881-1937), որը շնորհալի տնտեսական գործիչ էր: Հետագայում նա պատասխանատու պաշտոններ վարեց Անդրկովկասյան Ֆեդերացիայի եւ Խորհրդային Միության ղեկավար մարմիններում¹⁵:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՆԱՏՆՏԵԿՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԵՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՊՆԿՆԵՐՈՒՄԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐՈՒՆ ԱՐՏԱԳՐԱՆԻ ՄԵՋ 11 ՀԵԿՏԱՐԱԿ ԿԵՐՁՈՒՄ



¹⁴ - Հայ Ժողովրդի Պատմություն, հ. 7, 1967, էջ 192-193:

¹⁵ - Հայոց Պատմություն, Երևան, 1994, էջ 298-300

Երբ տնտեսական բարեփոխման ընթացքը սկսվել է, կայուն քայլերով ու սխտեմատիկորեն առաջ էր գնում, Հայաստանի նոր իշխանության թշնամիները եւ նրանց գործակալները հանձինս ՀՅԴ-ի դեմեւ աշխատում էին տապալել սովետական կարգերը, նրանք կատաղաբար դիմադրում էին կոմունիստական կուսակցության եւ սովետական կառավարության քաղաքականությանը: Արեւմտյան ուժերի օգնությամբ այդպիսի հակահեղափոխական տարրեր տնտեսության տարբեր ճյուղերում, հատկապես արդյունաբերության մեջ, տրանսպորտում գյուղում կազմակերպում էին սարսափ, դիվերսիա եւ այլ կարգի թշնամական գործողություններ: Կուսակալին եւ մյուս հակահեղափոխական ուժերը բանդիտական ելույթներ էին կազմակերպում իշխանության դեմ: Հայաստանում 1922-1923 թվականներին այդպիսի ելույթներ տեղի ունեցան Դարալա-գյազի, Դիլիջանի եւ այլ գավառներում:


Հայաստանի պետական արխիվում պահպանվում են փաստաթղթեր՝ Դաշնակցության կողմից իրականացված այդպիսի եւ այլ դավադրական գործողությունների վերաբերյալ¹⁶: Այդ կուսակցությունը ամբողջ 70 տարի հակասովետական պայքար մղեց արտասահմանում եւ Հայրենիքում (ընդհատակյա), ջլատեց հայ ժողովրդի միասնական ջանքերը՝ նոր ու շեն հայրենիք ստեղծելու հանդեպ, եւ դա մանավանդ այն ժամանակ էր տեղի ունենում, երբ ցեղասպանության ահռելի ճիրաններից մազապուրծ եղած հայ ազգի մի փոքր մասը, որոնք ապաստան էին գտել իրենց հայրենիքում նաեւ հարազատ հողի վրա կրելով ամենադժան պահեր ապրած հայ ժողովրդի մի մասը, միայն ցանկանում էր խաղաղություն եւ անդորր, ապահով պահեր, իր պատմական դարձած վերքերը ամոքելու, նոր ապագա կերտելու համար:

Երկրի ինդուստրացումը եւ գյուղատնտեսության կոլեկտիվացումը Ինդուստրացման գործընթացը

Ժողովրդական տնտեսության վերականգնումն ավարտելուց հետո ԽՍՀՄ-ում առաջ քաշվեց երկրի ինդուստրացման խնդիրը: Այս մասին համապատասխան որոշում ընդունեց ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարը (1925թ.): Ինդուստրացումը նշանակում էր ստեղծել արդյունաբերական ճյուղեր, երկաթուղիներ, հասնել նրան, որ ԽՍՀՄ-ի տնտեսության մեջ իշխող դառնար արդյունաբերությունը: Կուսակցության ղեկավարության մեջ իշխում էր այն տեսակետը, որ ԽՍՀՄ-ը կապիտալիստական շրջապատման մեջ միայնակ կարող է հասնել սոցիալիզմի հաղթանակին: Դրա համար հարկավոր էր ինդուստրացնել երկիրը, կոլեկտիվացնել գյուղատնտեսությունը, կատարել կուլտուրական հեղափոխություն:

Ինդուստրացման քաղաքականության կենսագործումը, որն սկսվեց 1920-ական թվականների երկրորդ կեսին, ենթադրվում էր, որ կպահանջի տեւական ժամանակաշրջան: Այստեղից էլ ծագեց հեզամյակներով պլանավորումը, որը շարունակվեց նաեւ հետագայում, խորհրդային իշխանության գոյության ամբողջ ընթացքում: Ինդուստրացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հնարավոր էր հայթայթել միայն երկրի ներսում: Գյուղացիության վրա դրվեցին հարկեր, աշխատավորներին տրվում էր չնչին աշխատավարձ, բռնագրավվում էին


վանքերի ու եկեղեցիների հարստությունները: Արտահանվում եւ վաճառվում էին հացը, անտառանյութը եւ բնական այլ հարստություններ:



Երևանի Վ. Ի. Լենինի անվան
«Հուլիսյան հեղեղ» գործարանի
գեներատորների արտադրամասը:

Ինդուստրացման համար վճռական նշանակություն ուներ էներգետիկայի հարցը: 1920-30-ական թվականներին կառուցվեցին Երեւանի ու Լենինականի (Գյումրի), Ջորադետի ու Քանաքեռի հեկերը: Վերջինը Սեւան-Հրազդան կասկադի առաջին կայանն էր, որը, ինչպես եւ հաջորդները, հետագայում աշխատելու էր Սեւանից բաց թողնվող ջրի հաշվին: Ժամանակի ընթացքում լճի մակարդակի իջեցումը ստեղծեց բնապահպանական լուրջ խնդիր, որը շարունակվում է մինչեւ այսօր:

Polyvinylacetate Works - one of the largest
chemical enterprises in the republic



Հանրապետությունում հիմք դրվեց քիմիական, լեռնահանքային (պղնձի) արդյունաբերությանը: Ղափանում հիմնադրվեց պղնձի հանքահարստացնող ֆաբրիկա: Այսօրվերում կառուցվեցին պղնձամուսկան եւ քիմիական գործարաններ: Դարաքիլիսայում (Վանաձոր) հիմնադրվեցին քիմիական ձեռնարկություններ: 1933 թ. Երեւանում դրվեց արհեստական կաուչուկի գործարանի հիմքը, որն առաջինն էր ԽՍՀՄ-ում: Այն սկսեց արտադրանք տալ 1940 թ.: Տասնամյակներ շարունակ Հայաստանը բավարարում էր ԽՍՀՄ-ի կաուչուկի պահանջարկի զգալի մասը:

¹⁶ - ՀՅԴ-ը եւ Խորհրդային իշխանությունը, փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Երեւան 1999, էջ 209-210 եւ այլ էջեր:

Միութենական նշանակություն ունեցող քիմիական արդյունաբերության զարգացումը հետագայում բնապահպանական ծանր խնդիրներ առաջ բերեցին:

Գյումրին դարձավ Հայաստանի տեքստիլ արդյունաբերության կենտրոնը: Կազմակերպվեց շինանյութերի արդյունաբերություն՝ հումքի հարուստ պաշարների, մասնավորապես տուֆ քարի հիմքի վրա: Դավալում (Արարատ) հիմնադրվեց ցեմենտի խոշոր կոմբինատ: Գործարկվեցին սննդի արդյունաբերության եւ այլ ձեռնարկություններ:

Առաջին հնգամյակի ընթացքում (1928-1932) Հայաստանում շահագործման հանձնվեց 18, իսկ երկրորդում (1933-1937)՝ 26 արդյունաբերական ձեռնարկություն: Երրորդ հնգամյա պլանի (1938-1942) կատարումն ընդհատվեց Հայրենական պատերազմի պատճառով:

Ինդուստրացման շնորհիվ 1928-1940 թթ. բանվորների թիվն ավելացավ 4.5 անգամ՝ հասնելով 92.4 հազարի: Մասնագիտացման նպատակով կազմակերպվեցին ֆաբրիկա-գործարանային ուսումնական հաստատություններ:

Նախապատերազմյան երեք հնգամյակների ընթացքում Հայաստանի տնտեսության մեջ առաջատար էր դարձել արդյունաբերությունը:

Հայաստանի ինդուստրացման գործում մեծ է ՀԽՍՀ ժողովրդի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի (1886-1937) ծառայությունը:



Սահակ Տեր-Գաբրիելյան -1886-1937

Ժողովրդական տնտեսության վերականգնումն ավարտելուց հետո ԽՍՀՄ-ում առաջ քաշվեց երկրի ինդուստրացման խնդիրը: Այս մասին համապատասխան որոշում ընդունեց ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարը (1925թ.): Ինդուստրացումը նշանակում էր ստեղծել արդյունաբերական ճյուղեր, երկաթուղիներ, հասնել նրան, որ ԽՍՀՄ-ի տնտեսության մեջ իշխող դառնար արդյունաբերությունը: Կուսակցության ղեկավարության մեջ իշխում էր այն տեսակետը, որ ԽՍՀՄ-ը կապիտալիստական շրջապատման մեջ միայնակ կարող է հասնել սոցիալիզմի հաղթանակին: Դրա համար հարկավոր էր ինդուստրացնել երկիրը, կոլեկտիվացնել գյուղատնտեսությունը, կատարել կուլտուրական հեղափոխություն:

Ինդուստրացման քաղաքականության կենսագործումը, որն սկսվեց 1920-ական թվականների երկրորդ կեսին, ենթադրվում էր, որ կպահանջի տեղական ժամանակաշրջան: Այստեղից էլ ծագեց հնգամյակներով

պլանավորումը, որը շարունակվեց նաեւ հետագայում, խորհրդային իշխանության գոյության ամբողջ ընթացքում:

Ինդուստրացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հնարավոր էր հայթայթել միայն երկրի ներսում: Գյուղացիության վրա դրվեցին հարկեր, աշխատավորներին տրվում էր չնչին աշխատավարձ, բռնագրավվում էին վանքերի ու եկեղեցիների հարստությունները: Արտահանվում եւ վաճառվում էին հացը, անտառանյութը եւ բնական այլ հարստություններ:

Ինդուստրացման համար վճռական նշանակություն ուներ էներգետիկայի հարցը: 1920-30-ական թվականներին կառուցվեցին Երեւանի ու Լենինականի (Գյումրի), Ջորադետի ու Քանաքեռի հեկերը: Վերջինը Սեւան-Հրազդան կասկադի առաջին կայանն էր, որը, ինչպես եւ հաջորդները, հետագայում աշխատելու էր Սեւանից բաց թողնվող ջրի հաշվին: Ժամանակի ընթացքում լճի մակարդակի իջեցումը ստեղծեց բնապահպանական լուրջ խնդիր, որը շարունակվում է մինչեւ այսօր:

Kirovakan artificial fibre mill. Twisting shop



Հանրապետությունում հիմք դրվեց քիմիական, լեռնահանքային (պղնձի) արդյունաբերությանը: Ղափանում հիմնադրվեց պղնձի հանքահարստացնող ֆաբրիկա: Այսպիսով կառուցվեցին պղնձաձուլական եւ քիմիական գործարաններ: Դարաքիլիսայում (Վանաձոր) հիմնադրվեցին քիմիական ձեռնարկություններ: 1933թ.

Երեւանում դրվեց արհեստական կաուչուկի գործարանի հիմքը, որն առաջինն էր ԽՍՀՄ-ում: Այն սկսեց արտադրանք տալ 1940թ.: Տասնամյակներ շարունակ Հայաստանը բավարարում էր ԽՍՀՄ-ի կաուչուկի պահանջարկի զգալի մասը:

Միութենական նշանակություն ունեցող քիմիական արդյունաբերության զարգացումը հետագայում բնապահպանական ծանր խնդիրներ առաջ բերեցին:

Գյումրին դարձավ Հայաստանի տեքստիլ արդյունաբերության կենտրոնը: Կազմակերպվեց շինանյութերի արդյունաբերություն՝ հումքի հարուստ պաշարների, մասնավորապես տուֆ քարի հիմքի վրա: Դավալում

(Արարատ) հիմնադրվեց ցեմենտի խոշոր կոմբինատ: Գործարկվեցին սննդի արդյունաբերության եւ այլ ձեռնարկություններ:

Առաջին հնգամյակի ընթացքում (1928-1932) Հայաս-տանում շահագործման հանձնվեց 18, իսկ երկրորդում (1933-1937)՝ 26 արդյունաբերական ձեռնարկություն: Երրորդ հնգամյա պլանի (1938-1942) կատարումն ընդհատվեց Հայրենական պատերազմի պատճառով:

Ինդուստրացման շնորհիվ 1928-1940 թթ. բանվորների թիվն ավելացավ 4,5 անգամ՝ հասնելով 92,4 հազարի: Մասնագիտացման նպատակով կազմակերպվեցին ֆաբրիկագործարա-նային ուսումնական հաստատություններ:

Նախապատերազմյան երեք հնգամյակների ընթացքում Հայաստանի տնտեսության մեջ առաջատար էր դարձել արդյունաբերությունը: Հայաստանի ինդուստրացման գործում մեծ է ՀԽՍՀ ժողովրդի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի (1886-1937) ծառայությունը¹⁷:

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը

1928-1929 թթ. դժվարություններ էին առաջ եկել հացամթերումների բնագավառում: Հացի պակասը լրացնելու համար ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ի. Ստալինի նախաձեռնությամբ հարձակում ծավալվեց կուլակ (ուճեւոր) գյուղացիների վրա՝ նրանց հացի պաշարները բռնագրավելու համար: Նրանց համար սահմանվեցին նա եւ խիստ բարձր հարկեր:



Կուսակցությունը գյուղական մասնավոր տնտեսությունները կոլեկտիվացնելու ծրագիր էր մշակում: 1927թ. ՀամԿ(Բ)Կ 15-րդ համագումարը որոշում ընդունեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը նախապատրաստելու մասին: Հացամթերման դժվարությունների առիթով կուսակ-ցության ստալինյան դեկավարությունը պահանջեց արագացնել կոլեկտիվացման տեմպերը: Եվ դա այն դեպքում, երբ գյուղացին ցանկություն չուներ հրաժարվել անհատական տնտեսությունից եւ մտնել կոլտնտեսություն: Մրանով կոպիտ կերպով խախտվում էր կոլեկտիվացման կամավորության սկզբունքը:

Բռնության եւ հարկադրանքի գործադրումը հանդիպեց գյուղացիության ուժեղ դիմադրությանը: Գյուղացիների դժգոհության եւ հակակոլտնտեսային տրամադրության արտահայտություն էին լայն տարածում գտած

անասունների մորթը՝ դրանք կոլտնտեսությանը չհանձնելու համար:

Համատարած կոլեկտիվացման ժամանակ կուսակցու-թյունն անցավ կուլակությանը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանը: Կուլակներին, նրանց ունեցվածքը բռնագրավելուց հետո, ընտանիքով արտաքսում էին գյուղից:

Հայաստանում, ի տարբերություն ԽՍՀՄ շատ շրջանների, կոլտնտեսային շարժման գործընթացը զգալիորեն դանդաղ էր առաջ գնում: Նման ազգային շրջաններում կոլեկտիվացման հետ մնալու պատճառների հարցը քննարկվեց 1934 թ. հուլիսին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմում կայացած խորհրդակցությունում: Նշվեց, որ այդ շրջաններում կոլեկտիվացման դանդաղ տեմպի պատճառը անհատական տնտեսությունների հարկային թեթեւ ծանրաբեռնվածությունն է՝ կոլտնտեսությունների համեմա-տությամբ:

Բնականաբար այդ խորհրդակցությանը հետեւեց հարկային բեռի ծանրացումը, որից ելքը գյուղացին տեսնում էր կոլեկտիվ գրվելու մեջ: Ընդ որում, թեթեւ չէր նաեւ կոլտնտեսու-թյունների հարկային բեռը: Նրանցից պետությունը կատարում էր մեծածավալ մթերումներ: Այդ պատճառով սով առաջացավ ԽՍՀՄ մի շարք շրջաններում: Հայաստանի Սեւանի գոտու շրջանների հազարավոր գյուղացիներ (մենատնտես եւ կոլտնտեսական) հեռացան իրենց գյուղերից՝ հաց վաստակելու համար:

Հայաստանում գյուղացիների մեծ մասը հարկադրաբար կոլտնտեսությունների մեջ մտավ հատկապես 1935–1937թթ.: 1940 թ. հանրապետությունում արդեն ավարտվել էր գյուղատնտես-ության կոլեկտիվացումը: Գոյություն ուներ շուրջ 1000 կոլտնտեսություն:

Գյուղատնտեսության հետ մնալու հիմնական պատճառը սոցիալիստական տնտեսաձեւը եւ պետության հարկային քաղաքականությունն էին, որոնք մերժում էին նյութական շահագրգռվածության սկզբունքը, ապրանքադրամական-շուկայական հարաբերությունները: Այսինքն՝ բացակայում էին զարգացման համար անհրաժեշտ տնտեսական խթանող պայմանները:



Երեւանի Փակ շուկան

Գյուղատնտեսության կոլեկտիվացումով մենատնտես գյուղացիությունը վերափոխվեց կոլտնտեսային գյուղացիության: Գյուղացիության մի մասն էլ համալրեց քաղաքային բնակչության, բանվոր դասակարգի շարքերը: Զեւավորվեց նաեւ գյուղական մտավորականության խավ¹⁸:

¹⁷ - Հայոց պատմություն, Երեւան 1994, էջ 301-303:

¹⁸ - Նույն տեղում, էջ 304-306:

Քաղաքական բռնությունները

Վլադիմիր Ի. Լենինը հավատում էր, որ կատարյալ եւ իրական ճշմարտությունը անհրաժեշտ է, անկախ նրանից, որ դա ումին է ծառայում: Նա հիմնադրեց հեղափոխական կուսակցություն, որը ըստ նրա, երբեք չէր կարող վերանայ, քանի որ իրենք գիտեին իսկական ուժի տեղը, եւ երբեք չէին սարսափում իրենց թուլությունների մասին արտահայտվելուց, այլ սովորում են ինչպես հաղթահարել դրանց:

Սակայն գիտենք, որ Լենինը իր կյանքի վերջին տարիներին «մահացավ 1924 թ.» լինելով հիվանդ՝ փաստորեն Սովետական իսկայական պետության կառավարումը թողել էր պատմության ամենադժոխային դեմքերից մեկին՝ Ի. Ստալինին, «անձի պաշտամունքի» արքային: Բոլշևիկների կուսակցության ղեկավարությունը իշխանությունը դիմեց մի շարք ձերբակալումների եւ արքայի:

Հայաստանում առաջին զանգվածային ձերբակալումները գործադրվեցին հայ սպայության նկատմամբ: 1920 թ. դեկտեմբերին եւ 1921 թ. հունվարին Հայաստանից արտաքսվեցին շուրջ 1400 հայ սպաներ: Աքսորյալների թվում էին գեներալներ Թովմաս Նազարբեկյանը, Մովսես Սիլիկյանը եւ ուրիշներ: Գնդապետ Պողոս Բեկ-Փիրումյանը, չտանելով նկատագրումը, ինքնասպանություն գործեց¹⁹:

Այս դեպքը պատահական չէր: Գարեգին Նժդեհը 1925 թվականին գրել է.

«1920 թ. դեկտեմբերի 2-ին լույս է տեսնում Դրոյի եւ Ավիսի ստորագրությամբ, թիվ 4 հրամանը՝ ուղղված Հայաստանի գործերին: Այդ հրամանով հայտարարում էին Հայաստանի գործերի վերակազմության հիմքերը:

Դրոն նշանակվել էր հրամանատար Խորհրդային գործերի: Սպայությունը մնում էր իր պաշտոնում, իր տեղը:

Ըստ երեւոյթին կարծես լավ էր:

Բայց ընդամենը մի քանի օր անց, Խորհրդային իշխանությունը սկսում է ցույց տալ իր մագիլները, իր իսկական գույնը: Նա անսպասելիորեն Երեւան է հրավիրում սպայությունը, զինաթափում եւ քշում է այն՝ Ռուսաստանի խորքերը, որպես «հակահեղափոխական» տարր: Մի քանի օր անց՝ միեւնոյն ճակատագրին է արժանանում նաեւ Դրոն...

Նժդեհ, Ազատ Սյունիք²⁰:

Իսկ Շահան Նաթային այսպես է պատասխանում Նժդեհի այդ գրությանը.

«Այսպես կը գրեն պատմությունը Նժդեհները: Փաստն այն է, որ հունվարի 10-ին Դրոն կը մեկնի Բագու, մինչեւ այդ օր պահելով իր պաշտոնը. իսկ սպայության մասին Նժդեհի գրածը տեղի կունենա հունվարի 15-ին: Իսկ դեկտեմբերի 2-են մինչեւ հունվարի 15-ը՝ ամիս ու կես է եւ ոչ մի քանի օր անց: Իսկ այդ ամիս ու կեսի ընթացքին տեղի կունենան Փրկության կոմիտեի ծնունդը, ապստամբական

պատրաստություններ, որոնցմե օրը օրին տեղյակ կ'ըլլա Չեկան: Իսկ Նժդեհ, արդեն դեկտեմբերի 25-ին Տաթևի մեջ անկախ Սյունիք հայտարարած՝ ապստամբություն կը խաղար Ռուբեն փաշայի հետ, որ իր խմբապետ Մարտիրոսի հետ Բազմառնեն ապստամբություն կը կազմակերպեր եւ փետրվարի 18-են առաջ կը սկսեր ապստամբական գործողությունները»²¹:

Այսպիսով տեսնում են, որ հայ սպաների ձերբակալումն ու արքայի Փետրվարյան արկածախնդրության նախապատրաստության հետեւանքներից էր՝ արկածախնդրություն՝ որը շատ ծանր նստեց հայ ժողովրդի ու Հայաստանի տարածքային հարցի նկատմամբ:

1923 թ. Դաշնակցություն կուսակցության «ինքնավերացման» համագումարից հետո, երբ արդեն ինքնաբացահայտվել եւ ցուցակավորվել էին այդ կուսակցության մի քանի հազար անդամներ, պատժիչ մարմինների գործը բավական հեշտացել էր: 1920-ական թվականների երկրորդ կեսին եւ հետագայում մի քանի շուրջկալներ կազմակերպվեցին, եւ հարյուրավոր դաշնակցականներ, որոնց մի մասը հրաժարվել էր կուսակցությունից, մեկուսացվեցին:

Պարզ էր, որ Դաշնակցությունը հավատարիմ չմնաց 1920 թ. դեկտեմբերի 2-ի իր կնքած Երեւանյան համաձայնությանը, եւ ամբողջ 70 տարի պայքարեց Խորհրդային Հայաստանի իշխանության դեմ՝ ամեն անգամ պատճառելով նորանոր արկածախնդրություններ ու ազգային վնասներ՝ երկրորդ պատերազմի իր Հայկական Լեգիոնով համագործակցել Ֆաշիստական Գերմանիայի հետ, հակառակ գնալ հայերադարձությանը, եւ այլն:

Պատժիչ մարմինների գործակալները 1938 թ. խեղդամահ արեցին Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանին²²:

ՀամԿ(Բ)Կ ԿԿ 1937 թ. փետրվարյան պլենումում Ստալինը ոռ միայն նորից առաջ քաշեց դասակարգային պայքարի սրման վերաբերյալ իր սխալ դրույթը, այլեւ հորինեց «հին» եւ «նոր» վնասարարների վերսիա: «Հներին» նա համարեց բացարձակ դասակարգային թշնամիներ, իսկ «նորերին» պետք է որոնեին ու գտնեին: Այդ սխալը նոր բռնությունների պատճառ հանդիսացավ²³:

1930 թվականից, երբ «համատարած կոլեկտիվացման» պատճառով խիստ սրվել էր տնտեսական ու քաղաքական իրադրությունը, բռնությունները նոր թափ առան:

Շատ գյուղացիներ, ովքեր դեմ էին հարկադրական կոլեկտիվացմանը, արտաքսվեցին հայրենի գյուղերից: Միայն 1930 թ. առաջին կեսին Հայաստանում ունեգրվել եւ արտաքսման էր ենթարկվել շուրջ 1100 գյուղացիական տնտեսություն:

Մինչեւ 1937 թ. վերջը Հայաստանում փակվել էր շուրջ 800 եկեղեցի: Փաստորեն հատուկենտ եկեղեցիներ էին գործում: Իսկ 1930–1938 թթ. բռնություն էր գործադրվել 164 հոգեւորականի նկատմամբ, նրանցից 91-ը գնդակահարվել էին:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմը 1938 թ. օգոստոսի 4-ին որոշում ընդունեց Էջմիածնի վանքը փակելու եւ հայ հոգեւորականության համագլխային կենտրոնը՝ Էջմիածնի կաթողիկոսությունը վերացնելու մասին: Հայոց եկեղեցին

²¹ - Շահան, նշված աշխ. էջ 35:

²² - Հայոց պատմություն, էջ 318: նաեւ՝ Ռոյ Մեդվեդեվ, Պատմության դատաստանը (Roy Medvedev, Let History Judge, English by Alfred A. Knopf), 1971, պարսկերեն թարգմանությունը՝ Մանուշեիր Հեգարխանի, Թեհրան 1360 (1981 թ.) էջ 334-335:

²³ - Հայ ժողովրդի Պատմություն, հ. 7, 371:

¹⁹ - Հայոց պատմություն, Երեւան, 1994, էջ 317:

²⁰ - «Հ» Ամսագիր, 1925, Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրեն 1930-ի Կովկասյան ապստամբությունները (Վերգնահատումներ) հատոր Բ, Փետրվար 18-ի ապստամբությունն Պրոմեթեի հրապարակումը, Մերսելյ, 1935, էջ 35:

սպարում էր ծանր օրեր: Միայն վերահաս Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով փոփոխված իրադրությունը կանխեց այդ որոշման կենսագործումը: Հայոց եկեղեցու գոյատևումը շարունակվեց, մեղմացավ ու փոխվեց քաղաքականությունը նրա նկատմամբ:

1930-ական թվականների կեսերին, երբ Ի. Ստալինի պաշտամունքը լիովին ձեռավորվել էր, երկրում ծավալվեց կամայականությունների ու բռնությունների նոր ալիք: 1936-1938 թվականները դարձան խորհրդային պատմության «սև տարիներ»:

Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) կուսմարզկոմի քարտուղար Ս. Կիրովի սպանությունն (1934 թ.) օգտագործվեց բռնություններին նոր թափ հաղորդելու համար²⁴: Բանտեր եւ արքայազններ նետվեցին անմեղ մարդիկ:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար, 35-ամյա Ադասի Խանջյանի սպանությունը, որը տեղի ունեցավ 1936 թ. հուլիսին Թիֆլիսում, օգտագործվեց բռնությունները ծավալելու համար: Նա ՀամԿ(Բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտեի քարտուղար, Ի. Ստալինի դրածո Լ. Բերիայի գոհն էր: Վերջինս հետագայում մերկացվեց եւ գնդակահարվեց, բայց մինչ այդ ԽՍՀՄ ներքին գործերի ժողովի պաշտոնում հասցրեց մեծ չարագործություններ կատարել:

1936 թ. օգոստոս-սեպտեմբերին Հայաստանում տեղի ունեցան նոր զանգվածային ձերբակալություններ: Դրանք սկսվեցին մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսես Մտեփանյանի նկատմամբ շինծու գործով ու ձերբակալությունով: Մի գործ, որն անձամբ ղեկավարում էր ներքին գործերի ժողովում Խաչիկ Մուղղուսին: Նա հորինեց նաև մեկ այլ խմբի կեղծ գործ, որի մեջ էին գրողներ Եղիշե Չարենցը, Ալսեյ Բակունցը, Մկրտիչ Արմենը, Գուրգեն Մահարին, Վահան Թոթովենց, Ալազան, Վաղարշակ Նորենց, Պ. Մակինյանը եւ ուրիշներ²⁵:

1937 թ. օգոստոսին հարցաքննության ժամանակ 3-րդ հարկի լուսամուտից իրեն դուրս նետեց (կամ դուրս նետեցին) Հայաստանի կառավարության նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը: Այդ առիթով Ի. Ստալինը նամակով դիմեց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյին՝ պահանջելով խստացնել պայքարը «հայ ժողովրդի թշնամիներին» դեմ, որոնք իբրեւ թե ազատորեն թրեւ են գալիս եւ վնաս հասցնում ժողովրդական տնտեսությանը: Դրա հետևանքով ուժեղացան բռնությունները:

Պատմիչ մարմինների, մատնիչների աչքից չվրիպեցին նաև գյուղատնտեսության, դպրոցի աշխատողները, ուսանողները:

Միայն 1937 թ. Հայաստանում ձերբակալվել է 5000 մարդ: Նրանց 67 տոկոսի համար ընդունվել է գնդակահարության որոշում:

Բռնաճնշումների ծավալումը չէր կարող դառնալ անվերջ, մանավանդ երկրի միջազգային դրության սրվելու պայմաններում: Ուստի 1938 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հատուկ որոշումներով տեղի ունեցավ որոշ մեղմացում:

Դրա հետևանքով քաղաքական մեղադրանքներով խորհրդային անմեղ մարդկանց բռնությունները նվազեցին, բայց լիովին չդադարեցին, ինչպես Հայրենական պատերազմի տարիներին, այնպես էլ դրանից հետո: Իսկ 1949 թ. մարդկանց մեծ խմբեր արքայազններ Ալթայի երկրամաս:

Հայաստանում այդ բռնությունները սկսվեցին շատ վաղ: Հայաստանի ղեկավարությունը դեմ էր ռճրագործ Բերիայի Անդրկովկասի առաջին քարտուղար ընտրվելուն, եւ վերջինս էլ տեղակ էր այդ մասին: Առավել եւս Հայաստանի լուսժողովում Ներսիկ «Ներսես» Մտեփանյանը խիստ քննադատել էր Բերիայի մի փոքր զբոսիկ անճիշտ ու կեղծված բովանդակությունը ««Վերացնենք սոցիալիզմի թշնամիներին», ուստի Բերիան նախ նրա հետ հաշվեհարդար տեսավ: Թիֆլիսում 1936 թ. հուլիսի 9-ին Բերիայի միջոցով Ադասի Խանջյանի սպանվելուց հետո»²⁶, երկրի եւ կուսակցության ղեկավարությունը հանձնվում է Գ. Ամատունիին եւ Ս. Ակոփովին, Խ. Մուղղուսին, Գ. Շատուրովին, Գեորգովին, սակայն շուտով Ամատունին եւ Ակոփովը «Հակոբով» կասկածի ենթարկվելով կուսակցությունից հեռացվում եւ ազատագրվում են: Գ. Ա Հարությունյանը ընտրվում է կուսակցության առաջին քարտուղար²⁷:

Բռնությունների գոհեքից էին Հայաստանի պետական եւ կուսակցական գործիչներ. Ա. Մ. Նազարեթյանը «Լենինի խորհրդով նաշանակվել էր Ստալինի օգնական», Գեորգ Ալիխանյան «Հայաստանի ԿԿ առաջին քարտուղար», Սարգիս Սրայիոնյան «Լուկաշին», Աշոտ Հովհաննիսյան, Հայկ Հովսեփյան, Հայկազ Կոստանյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Սերգո Մարտիկյան, Սարգիս Կապյան «Հայաստանի հեղկոմի առաջին նախագահ», Գեորգ Հանեսօղյան, Արտո Եղիազարյան, Դանուշ Շահվերդյան, Արշավիր Մելիքյան, Ռուբեն Դաշտոյան, Արամայիս Երզնկյան²⁸, Վ. Երեմյան, Ա. Եսայան, Ա. Եղիազարյան, նրանցից միայն Ա. Հովհաննիսյանը կենդանի մնաց: Այլ անուններ՝ Գ. Դ. Խախանյանց, Ս. Արշակունի, Յ. Տ. Թորոսյան, Ի. Տեր Աստվածատրյան, Փ. Գ. Հարությունյանց եւ ուրիշներ²⁹:

1937 թ. Հայաստանի համար ռեկորդային տարի էր բռնադատվածների թվով՝ 4700 մարդ, որից 3200 մարդ գնդակահարվել էր: Իսկ 1938 թ. գնդակահարության դատապարտվեց 3050 եւ տարբեր ժամկետներով բանդարկության՝ 1500 մարդ:

Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում անհիմն կերպով բռնաճնշման ենթարկվեց շուրջ 25 հազար մարդ, որոնց զգալի մասը գնդակահարվեց³⁰:

Այս ամենը հնարավոր դարձավ անսանձ բռնության ու ամբողջատիրության պատճառով, ժողովրդավարության բացա-կայության պայմաններում: Ստալինյան ռճրագործություններին հնարավոր եղավ վերջ տալ միայն նրա մահից հետո (1953 թ.):

²⁶ - Դավիթ Գասպարյան, Փակ դռների դադունիքը, Երևան 1994, էջ 20-36: նաև՝

-Ռոյ Մեդվեդև, Պատմության դատաստանը (Roy Medvedev, Let History Judge, English by Alfred A. Knopf), 1971, պարս. թարգմանությունը՝ Մանուչեիր Հեգարիսանի, Թեհրան 1360 (1981 թ.) էջ 208,220-240,243-244, 275, 291-292, 298, 300,304,306,315,322,325,334-335,408,461-642 եւ 663:

նաև՝ Գ. Գասպարյան, Փակ դռների դադունիքը, Երևան 1994:

նաև՝ Alexandr Orlov, The History of Stalin's Crimes, Persian Translation bt Enayatollah Reza, PhD, Tehran, 1987.

²⁷ - Ակնարկ Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության, Երևան 1964, էջ 355:

²⁸ - Հայ Ժողովրդի Պատմություն, հ. 7, 373:

²⁹ - Ռոյ Մեդվեդև, Պատմության դատաստանը (Roy Medvedev, Let History Judge, English by Alfred A. Knopf), 1971, պարս. թարգմանությունը՝ Մանուչեիր Հեգարիսանի, Թեհրան 1360 (1981 թ.) էջ 208,220-240,243-244, 275, 291-292, 298, 300,304,306,315,322,325,334-335,408,461-642 եւ 663:

³⁰ - Հայոց պատմություն, Երևան, 1994, էջ 320:

²⁴ - Ռոյ Մեդվեդև, Պատմության դատաստանը (Roy Medvedev, Let History Judge, English by Alfred A. Knopf), 1971, պարսկերեն թարգմանությունը՝ Մանուչեիր Հեգարիսանի, Թեհրան 1360 (1981 թ.) էջ 221-240:

²⁵ - Հայ Ժողովրդի Պատմություն, հ. 7, 373:

Իրանահայ Համայնք

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու 1700-ամյա պատմության ընթացքում ե՞րբ է եղել երկու ամենայն հայոց կաթողիկոս

Հրաչ Միրզախանյան

ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ԵԿԵՂԵՑԻ

ԵՐԿՈՒՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ...

Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցի շեմին, մեր ազգային շահերը առավել ևս անհրաժեշտություն են դարձնում աշխարհացրիվ հայ ժողովրդի միասնականությունը:

Այդ միասնականության ապահովման, ազգի բոլոր զավակներին մեկ դրոշի տակ համախմբելու պարտականությունը նախ և առաջ դրված է ազգի իշխանավորների ու հովվապետների ուսերին:

Բայց կատարվում է հակառակը:

Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետ Ս. Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովվապետական յոթերորդ այցը Իրան փոխարեն ի մի բերի, ոգևորի ու համախմբի մեր ժողովրդին, սերմանում է խռովություն ու շփոթություն, առիթ տալիս բողոքների ու տարանջատումների:

Ս. Էջմիածնից անօրինաբար զավթված իրանահայ, այժմ անթիվասական, երեք թեմերի վարած քաղաքականությունը պառակտում ու շփոթություն է առաջացնում թե՛ իրանահայ համայնքում և թե՛ ընդհանուր հայության ազգային կրոնական կյանքում:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու 1700-ամյա պատմության ընթացքում ե՞րբ է եղել երկու ամենայն հայոց կաթողիկոս: Պատահել է, որ մի ժամանակահատվածում եղել են չորս կաթողիկոսներ, բայց դրանցից միայն մեկն է եղել ամենայն հայոց, իսկ մեր ժամանակաշրջանում՝ Անթիլիասում, Արամ կաթողիկոսի գահակալությունից հետո, իրանահայ թեմերի ղեկավարները աշխատում են Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետին շնորհել «ամենայն հայոց» կոչումը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ամենասուրբ արարողություններից մեկը սուրբ պատարագի մատուցումն է: Այդ հոգեպարար արարողության մեջ ևս, առնվազն 2000 թվականից այս կողմ, կատարվել է փոփոխություն, հիշմուքի ժամանակ հիշում են՝ «... մեր Եպիսկոպոսապետին և Ամենայն Հայոց պատական Հայրապետին՝ Տեր Տեր Գարեգին սրբազնագոյն Կաթողիկոսի ու նաև մեր Եպիսկոպոսապետ եւ Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետին՝ Տեր Տեր Արամ սրբազնագոյն Կաթողիկոսին ...»:

Մեկ Առաքելական Եկեղեցին քանի՞ եպիսկոպոսապետ կարող է ունենալ, եթե ոչ մեկը, որն էլ, ըստ բոլոր կրոնական աղբյուրների, հատկացված է Ս. Էջմիածնի գահակալին:

Նաև ո՞րն է «Եպիսկոպոսապետ եւ Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ» բառաշարի իմաստը: Կրոնապատմական ո՞ր աղբյուրում գոյություն ունի նման անվանակոչում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համար: Ո՞ր Ազգային կամ կրոնական ժողովում է հաստատվել այս անվանակոչումը: Ի՞նչ է այս խեղաթյուրման իմաստը, ի՞նչ են հետապնդում և ու՞ր են ուզում հասնել նրա հեղինակները: Թող նրանք բացեմբաց պաշտոնական հաղորդագրությամբ հայտարարեն իրենց գործունեության օրինականությունը կամ իրենց արարքի

նպատակը, ներկայացնեն իրենց փաստարկները, գուցե համոզեն բոլորին:

Այս նենգափոխումը ոչ մի իրավական հիմք ու արդարացում չունի և չի կարող դիմանալ որևէ քննադատության: Ժամանակին Սպահանի հայոց թեմի Ներկայացուցչական ժողովներից մեկում մի քանի ներկայացուցիչների բողոքից հետո, ժողովը որոշում կայացրեց դադարեցնել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին կցել «ամենայն հայոց» տիտղոսը, մի կարճ ժամանակահատված կիրառվեց այդ որոշումը, բավարարություն պատճառելով բոլորին, սակայն ժամանակ անց թեմակալ առաջնորդի որոշմամբ կրկնվեց ու կրկնվում է նախկին սխալը:

Միթե՞ Արամ Ա. Կաթողիկոսը անտեղյակ է այս բողոքից, նա ինչո՞ւ է թույլ տալիս նման խեղաթյուրումներ: Եթե նա Ամենայն Հայոց է, ինչո՞ւ իր պաշտոնական նամակագրություններում ու հրատարակած կոնդակներում իր անվան առաջ չի նշում «ամենայն հայոց»-ը:

Էջմիածնի Ս. Աթոռի գահակալ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ու Մեծի Տանն Կիլիկիո գահակալ Արամ Ա. Կաթողիկոսը շատ անելիքներ ունեն մեր եկեղեցու բարեկարգման ու ժողովրդի բարեկեցության համար: Հայ ժողովուրդը շատ բան է տվել հանուն իր եկեղեցու ստեղծման ու հավատամքի պահպանման: Մեր նվիրական Աթոռները և նրանց Գահակալները շատ բանով են պարտք մեր ժողովրդին: Նվազագույնը թող նրանք պահպանեն ժողովրդի միասնականությունը և պատճառ չդառնան պառակտումի: Մեր եկեղեցին չունի միասնական կանոնադրություն, մինչ այժմ էլ Ս. Էջմիածինը իր թեմերով առաջնորդվում է 1836 թ. ռուսահայոց համար Ցարական Ռուսաստանի կողմից հաստատված «Պոլոժենիա»-ի օրենքով, իսկ Կիլիկիո Կաթողիկոսությունը 1861թ. թուրք սուլթանի կողմից հաստատված «Սահմանադրություն տանկահայոց համար» օրենքով:

21-րդ դարում ի՞նչն է պատճառը որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր հայրերը և հայ պետական ու ազգային այրերը չեն կարողանում կամ չեն ցանկանում ի մի գալ ու մշակել միասնական մի կանոնադրություն, որում այլևս չլինի Աթոռների ու Թեմերի տարանջատում, Էջմիածնական ու կիլիկյան թեմեր ու եկեղեցիներ միևնույն երկրում, չլինեն Էջմիածնական ու կիլիկյան հոգևորականներ, որոնք իրարու որակեն արեղաներ ու սատանաներ, կամ կոնդակներով անիծեն իրար, որպեսի ազգն էլ իմանա՝ ո՞վ է գերադասն ու ո՞վ է հպատակը: Եվ վերջապես ո՞րն է Սբ. Էջմիածնի պաշտոնական վերաբերմունքը, արձարժված խնդրի նկատմամբ:

Մինչ 1990 թվականը պառակտման մեջ մեղադրում էին Խորհրդային Հայաստանի իշխանություններին, ի՞նչ ունեն ասելու այժմ, 25 տարի անկախությունից հետո:

Իրանահայությունը շարունակում է դատապարտել Ս. Էջմիածնի նկատմամբ ոտնձգությունները

Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից կիրառված ապագային եւ հակաեկեղեցական քայլին ի պատասխան, «Արաքս» շաբաթաթերթի, հոտեմբերի 20-ին, հրապարակած լուսաբանական եւ բողոք-լրատվությունից հետո, նամանավանդ երբ Սպահանի եւ Ատրպատականի թեմերի առաջնորդները, Թեհրանում, Արամ Ա կաթողիկոսի ներկայությամբ, Սբ. պատարագի ընթացքում «Հիշման» ժամանակ, իրանահայ պատմության մեջ առաջին անգամը լինելով, չհիշեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը, փոխարենը Անթիլիասի գահակալին «ամենայն հայոց կաթողիկոս» անվանելով, եւ երբ Արամ

կաթողիկոսի բարի երթի ընթերցի ընթացքում, որը կազմակերպել էր ԹՀԹ Թեմական խորհուրդը, Իրանի իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարավային իրանահայության պատգամավոր դաշնակցական Ռոբերտ Բեգարյանը, եւս նման ապագային քայլի գնալով, «ամենայն հայոց կաթողիկոս» տիտղոսը «ընծայեց» Արամ Ա-ին, ապացուցելու, որ ՀՅԴ-ն է կանգնած հակաէքզիստենցիալ այս սցենարի ետեւում, իրանահայ տարբեր դեմքեր ու կառույցներ դատապարտման ձայն բարձրացրեցին Ս. Էքզիստենցիալ գերակայության նկատմամբ այս կազմակերպված դավադրական ոտնձգության դեմ:



Հիշատակենք, 2012 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսության մամուլ խոսնակ Տ. Վահրամ քին. Մեկիքյանը հայտարարեց. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է այս օրինակ (Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից կիրառվող-Ա.) պահվածքը, որով փորձվում է արհեստական շփոթ առաջացնել եւ այսկերպ լարվածություն առաջ բերել ներեկեղեցական եւ հանրային կյանքում: Հարկ է, որ թեմական կառույցների պատասխանատուները եւ իրանական լրատվամիջոցների ներկայացուցիչները վերապահ մնան նման անընդունելի քայլերից եւ հարգեն եկեղեցական սրբազան նվիրապետությունը»:

Ստորեւ. ներկայացնում ենք ԹՀԹ Թեմական խորհրդի ավելի քան վեց տարիների առնչությամբ, Պատգամավորական ժողովի նախկին անդամ, Իրան-Հայաստան առեւտրական պալատի հիմնադիր եւ նախագահ, Իրան-Հայաստան բարեկամության միության հիմնադիր եւ նախկին նախագահ, ազգային բարերար եւ «Յոյս» երկշաբաթաթերթի արտոնատեր պրն. Լեւոն Ահարոնյանի դատապարտում-բողոքի բաց նամակը այս կապակցությամբ, որը հրապարակվել է «Յոյս» երկշաբաթաթերթի 180-րդ համարում, 25 հոկտեմբերի 2014 թվին:

ԼԵՒՈՆ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ԽՕՍՔԸ ԹԷ ԻՆՉՊԷՍ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՐ» Է ՀՈՉԱԿԻՈՒՄ

«Տարեկան տասնեակ իրանահայեր իրենց զաւակներին մկրտելու համար տանում են Էջմիածին, ոչ թէ Անթիլիաս, որ ընդհանրապէս չգիտեն ուր է»

Շնորհաւորում եւ ողջունում եմ Թեհրանի եւ հիւսիսային Իրանի հայ համայնքի թեմի առաջնորդին եւ Թեմական խորհրդին, որ իրենց թոյլ են տւել «աշխարհի հայ ժողովրդի» համար կաթողիկոս նշանակել: Բայց թէ այս քանդիչ ու վնասակար թոյլտուութիւնը ո՞ր կազմակերպութիւնից կամ կրօնական հաստատութիւնից են ստացել նրանք, դա մեզ յայտնի չէ: Մեր Թեմական խորհուրդը ժողովրդի դրամով մեծ ցուցատախտակ է պատրաստել ու փակցրել եկեղեցու մուտքին, որտեղ իրենց կարծիքով ճարպկօրէն դասաւորած նախադատութեամբ բարի գալուստ են մաղթել Արամ Ա. կաթողիկոսին՝ որպէս «աշխարհի բոլոր հայութեան» կրօնական ղեկավար, եւ անտեսել են հայ ժողովրդի կրօնական ամենաբարձր տիադոսը կրող՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին ու «աշխարհի հայ ժողովրդի» Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, եւ Կիլիկիոյ վեհափառին նստեցրել այդ սուրբ գահի վրայ: Այլ խօսքով, բարի

գալուստ մաղթելու պատրուակով գեներալին նստեցրել են թագաւորի գահին, անտեսելով ժողովրդի կարծիքը:

- «ԴՈՒՔ ՈՐՏԵՐ ԷԻՔ, ԵՐԲ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ԵՒ 12 ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԹԻՆ... ԴՈՒՔ ԸՆԴԱՄԵՆԸ 60 ՏԱՐԻ Է, ՈՐ ԵԿԵԼ ԷՔ ԱՅՍ ԵՐԿԻՐԸ ԵՒ ՄԻ ՄՈՌԱՑԵՔ ԶԵՐ ԳԱԼԸ ՈՉ ԹԷ ԺՈՂՈՎՐԴԻ ՅԱՆԿՈՒԹԵԱՄԲ Է ԵՂԵԼ, ԱՅԼ ԺԱՄԱՆԱԿԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԵՒ ՇԱՀԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՅՑԻ՝ «ՍԱՎԱՔ»-Ի ՈՐՈՇՈՒՄՈՎ»:

Սիրելի սրբազան հայր, Արամ կաթողիկոսին այսպիսի ներկայացնելը բոլորովին ճիշտ չէ եւ ո՛չ էլ Թեմական խորհրդին վայել է, որ այդ կերպ պարսկերէն սխալներ կատարի: Մի հոգեւոր պետի այնպէս պիտի ներկայցնել, ինչպէս որ կայ՝ իր ճիշտ պաշտօնով եւ ո՛չ թէ նրա շրջապատը նրան ոչ ճիշտ պաշտօն տայ: Յարգելի առաջնորդ, Ձեր հագած զգեստը համերաշխութեան, սիրոյ, հաւատքի ու ժողովրդասիրութեան խորհրդանիշ է, ոչ թէ համայնքը երկպառակտելու եւ տագնապի մատնելու:

- «ԴՈՒՔ ԵԹԷ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՎԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ 350-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ ԳԱՐԵԳԻՆ ՎԵՀԱՓՈԻՆ՝ ԻՍԿԱԿԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀՐԱՎԻՐԷԻՔ ՆՈՐ ՋՈՒՂԱ, ԱՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԴԵԿԱՎԱՐԻՆ, ՈՐ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՅՈՒՇԱԿՈՌՈՂՆԵՐԸ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԺԱՌԱԳՈՐԴՆ Է, ԶԵՐ ՊԱՏԻՒՆ ՈՒ ՅԱՐԳԱՆՔԸ ՀԱՐԻՐ ԱՆԳԱՄ ԱԵԼԻ ԳԱՐԶԱՆԱՐ ԵՒ ՆՈՅՆՊԷՍ ԷԼ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ»:

Եթէ Արամ Ա. կաթողիկոսը ցանկութիւն ունի ամենայն հայոց կաթողիկոս դառնալ, դրա ճամբան միայն Էջմիածնից է անցնում, ոչ թէ Թեհրանի Թեմական խորհրդից: Յարգարժան առաջնորդ, ի՞նչ նպատակով էք այս կարգի հակաժողովրդական քայլերի դիմում: Եթէ ձեր դրոշմապատճառը անձնական է, Դուք արդէն թեմի արքեպիսկոպոս առաջնորդ էք, իսկ եթէ քաղաքական է, դա չպիտի կատարի մի պարզ ու յայտնի իրականութիւնների անտեսմամբ: Եթէ իրանահայ ժողովուրդը Ձեզ յարգում է, յարգում է որպէս մի հայ կրօնապետ, ոչ թէ Կիլիկիայից նշանակւած առաջնորդ. դա իրանահայութիւնը ցոյց տւեց Արտակ սրբազանի թաղման օրը: Եթէ Ձեր այդ ցուցատախտակի սխալ գրութիւնը նշանակում է, որ Դուք մեր հայ ժողովրդի կրօնական հաւատալիքներն ու իր պատմական կրօնի կենտրոնը մատաղացու ոչխարի նման մատաղ էք անում, որ Արամ վեհափառին կեղծ կերպով Ամենայն հայոց վեհափառ դարձնէք. մի մոռացէք, որ գնդակին չափից աւել օդ փչելով, ներսի օդն աւելի է շատանում եւ կարող է միանգամից պայթել: Վստահաբար այս կարգի ցուցատախտակ պատրաստելն առանց Ձեր թոյլտուութեան չի կարող լինել. իսկ եթէ թոյլ էք տալիս Թեմական խորհուրդին այսպիսի մի ցուցատախտակ փակցնի մեր եկեղեցու՝ առաջնորդարանի դռանը, այդպիսով նա ժողովուրդի մօտ կը ներկայանայ որպէս ճշմարտութիւնը խեղաթելուող եւ պաշտօնական հանգամանքներն անտեսող մի խորհուրդ: Ի՛նչու էք թոյլ տալիս Թեմական խորհուրդին այդպիսի մի ցուցատախտակ փակցնի մեր եկեղեցու՝ առաջնորդարանի մուտքին եւ այդ կերպով ժողովուրդի մօտ անագին ու կեղծ պաշտօն կրող մի խորհուրդ ներկայանալ: Ի՛նչու՝ էք ժողովրդի ցանկութիւնից ու սիրուց հեռու մնում, ու անտեսում իրանահայ ժողովրդի 99%-ին, որ ընդհանրապէս Անթիլիաս չի ճանաչում: Դրա մի փոքրիկ փաստն այն է, որ տարեկան տասնեակ իրանահայեր իրենց զաւակներին մկրտելու համար տանում են Էջմիածին եւ ոչ թէ Անթիլիաս, որ ընդհանրապէս չգիտեն ուր է: Դուք կարծում էք այդ կարգի յայտարարութիւններով Արամ վեհափառին մեծարում էք: Բայց արդե՞ք նա կարիք ունի այդ կարգի տիտղոսների: Եթէ պատասխանը դրական է, դա մեր ազգի համար մի ողբերգութիւն է: Մի մոռացէք, երբ մի անձնաւորութեան շինծու կերպով չունեցած պաշտօն են ընծայում, դա նշանակում է, որ նա իրականում արժանի չի եղել եւ չի կարողացել այդ պաշտօնը վաստակել: Դուք ինչպե՞ս եք ուզում Էջմիածինն իր պատմական անցեալով անտեսել կամ Ձեր սեփականութիւնը դարձնել: Դուք որտե՞ղ էիք, երբ Ս. Ամենափրկիչ վանքը Նոր Զուլայում կառուցեց: Գիտե՞ք կան նաեւ 12 ուրիշ եկեղեցիներ: Դրանց կառուցումը զարմանալի սուրբ աշխատանք էր, որով Էջմիածինը կարողացաւ Ծախ Աբասի բռնագաղթեցրած հայերին մինչեւ այսօր մուսուլման երկրում քրիստոնէայ պահել: Դուք ընդամենը 60 տարի է, որ եկել էք այս երկիրը եւ մի մոռացէք Ձեր գալը ոչ թէ ժողովրդի ցանկութեամբ է եղել, այլ ժամանակի քաղաքական խնդիրների պատճառով եւ Ծախի

Հայաստան

Մահացել է Վլադիմիր Մովսիսյանը

05.11.2014



Նախկինում տարբեր բարձր պաշտոններ զբաղեցրած Վլադիմիր Մովսիսյանն այսօր՝ նոյեմբերի 5-ին, մահացել է 81 տարեկան հասակում:

Նշենք, որ Վլադիմիր Մովսիսյանը աշխատել է գլխավոր անասնաբույժ, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, ՀԽՍՀ պետական ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահ: Եղել է ՀՀ փախստականների հարցերով պետական վարչության պետ, 1996թ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, 1996-1999թթ՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարար: 1999-2004թթ աշխատել է ՀՀ վարչապետի խորհրդական: 2004 թվականից՝ ՀՀ անտառների վերականգնման եւ զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն: 2009 թվականից՝ ՀՀ Հանրային խորհրդի անդամ է, իսկ 2012 թվականից՝ ՀՀ նախագահին կից Մեծանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի նախագահին էր: [Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

«Հայաստան» Համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնները մինչ այսօր ներկայացվում են հետեւյալ աղյուսակում:

Հեռուստամարաթոն	Թվական	Գումար
1	1997	\$2,600,000
2	1998	\$2,100,000
3	1999	\$5,006,196
4	2000	\$??
5	2002	\$5,000,000
6	2003	\$6,000,000
7	2004	\$11,400,000

8	2005	\$7,770,000
9	2006	\$13,700,000
10	2007	\$15,275,000
11	2008	\$35,000,000
12	2009	\$15,875,043
13	2010	\$20,862,733
14	2011	\$31,000,000
15	2012	\$21,400,000
16	2013	\$22,661,372
17	2014	12,399,550

5-ական ու ավելի երեխա. 2014թ.-ին Հայաստանում՝ 339 ընտանիքում



Հայաստանում 2014թ.-ի սկզբից 339 ընտանիք երեխայի ծննդյան նպաստ է ստացել՝ 1,5 մլն դրամ: Այդ մասին հոկտեմբերի 31-ին Հայաստանի խորհրդարանում հայտարարել է Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը: Նա հիշեցրել է, որ 1,5 մլն դրամ չափի(3650 դոլար)միանվագ նպաստը տրվում է 5-րդ եւ հաջորդ երեխաների ծննդյան դեպքում: Մոտ 6,4 հազար ընտանիքի ստացել է 1 մլն դրամի նպաստ 3-րդ կամ 4-րդ երեխայի ծննդունդից հետո: Առաջին կամ երկրորդ երեխայի ծնունդից հետո 50 հազար դրամի նպաստ ստացել է մոտ 42 հազար ընտանիք:

Նախարարը հիշեցրել է, որ գումարի մի մասը հատկացվում է ընտանեկան կապիտալին ընթացիկ ծախսերի համար՝ երեխայի կրթությունը, բնակարանային ապագա հարցերը եւ այլն: 1 մլն դրամի չափով նպաստի դեպքում ընտանեկան կապիտալին հատկացվում է 500 հազար դրամ, 1,5 մլն-ի դեպքում՝ 1 մլն դրամ:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

ՀՀ-ԼՂՀ զորավարություններին Արցախի կողմից մասնակցում է 30 հազար զինծառայող 10.11.2014



Հայկական երկու հանրապետությունների ռազմական համագործակցության ծրագրի շրջանակներում նոյեմբերի 6-ից անց են կացվում «Միասնություն 2014» անունը կրող օպերատիվ-մարտավարական լայնածավալ զորավարություններ:

ԼՂՀ ՊԲ-ի կողմից զորավարությանը մասնակցում են ավելի քան 30000 զինծառայողներ, այդ թվում նաև զորահավաքային ռեսուրսից, 1550 միավոր հրետանային միջոցներ, 600 միավոր զրահատեխնիկա, 300 միավոր ՀՕՊ միջոցներ, այդ թվում նաև Ս-10ՄԱ ՁՀՀ-ներ, 1300 միավոր հակատանկային միջոցներ, 160 միավոր հատուկ տեխնիկա եւ ավելի քան 3000 ավտոմեքենա:

Զորավարությունները անցկացվում են նախատեսված պլանի համաձայն:

Մասնակից շտաբները, ղեկավարման մարմինները, հրամանատարները եւ ողջ անձնակազմը ցուցաբերում են պատրաստականության բարձր մակարդակ՝ հաջողությամբ իրականացնելով առաջադրված մարտական խնդիրները:

Զորախաղերը շարունակվում են: Դրանց հետագա ընթացքի եւ արդյունքների մասին այլ մանրամասներ կհաղորդենք հաջորդիվ:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Թուրքիա մեկնող հայաստանցիների թիվը նվազել է

11.11.2014

Թուրքիա մեկնած Հայաստանի քաղաքացիների թիվը 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 54 170 մարդ:

Ինչպես [NEWS.am](#)-ը տեղեկանում է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունից, 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Թուրքիա այցելած հայաստանցիների թիվը նվազել է 3.6 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակատվածի համեմատ: Նախորդ տարի տվյալ ժամանակահատվածում Թուրքիա էր այցելել 56 177 մարդ:

Միայն 2014-ի սեպտեմբերին Թուրքիա է մեկնել 6 579 Հայաստանի քաղաքացի, ինչը գրեթե 10 տոկոսով պակաս է նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Կոմկուս. Ինչպե՞ս կարող են համագործակցել ԲՀԿ-ն ու «Ժառանգությունը»

12.11.2014



Խորհրդարանական ոչ բոլոր եռյակների ու քառյակների համագործակցությունն է տեղի ունենում հոգուտ ժողովրդի: Այս մասին նոյեմբերի 12-ի մամուլի ասուլիսում հայտնել է ՀՀ Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Տաճատ Սարգսյանը:

Անդրադառնալով խորհրդարանական եռյակի իշխանափոխության կոչերին եւ նրան, թե որքանով է հնարավոր իշխանափոխությունը երկրում, Տաճատ Սարգսյանը հիշեցրել է, որ անկախության տարիներին հայ ժողովուրդն ականատես է դարձել քաղաքական ուժերի տարբեր եռյակների ու քառյակների:

«Ես ցանկանում եմ հարցնել՝ ի՞նչ արդյունքի հանգեցրեց այդ համագործակցությունը՝ լինի դա ՀՀԸ-ի, երկրորդ նախագահ Ռոբերտ Զոհարյանի, թե Սերժ Սարգսյանի կառավարման ժամանակահատվածում: ՀՀ Կոմունիստական

կուսակցությունը կաջակցեց այդ կոչերին եւ կմիանար այդ ուժերին, եթե նրանք որեւէ կերպ նպաստեին սոցիալական հարցերի լուծմանը», - ընդգծել է առաջին քարտուղարը: Տաճատ Սարգսյանի համար անհասկանալի է, թե ինչպես, օրինակ՝ «Ժառանգություն» կուսակցությունը եւ ԲՀԿ-ն, որոնք ունեն տարբեր քաղաքական ուղղություններ, կարող են համագործակցել ինչ-որ հարցում:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Հայաստանում երկու լեզվով գիրք է հրատարակվել Թուրքիայի կրոնափոխ հայության մասին

16.11.2014

Երեսնամյա հայերենով եւ թուրքերենով լույս է տեսել Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, հայագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Հայկազուն Ավրեյանի «Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում» մենագրությունը:

Գրքում ներկայացվում է Օսմանյան կայսրությունում եւ Թուրքիայի Հանրապետությունում հայերի կրոնափոխության մի քանի կարեւոր դրվագների համառոտ պատմությունը: Առանձին գլուխ է հատկացված համաշնահայերի եւ Դերսիմի հայերի կրոնափոխության խնդրին: Առավել հանգամանորեն արծարծվում են Հայոց ցեղասպանության շրջանը եւ դրան հաջորդած ժամանակաշրջանի իրադարձությունները՝ մինչեւ մեր օրերը, ինչպես նաեւ՝ կրոնափոխ հայերի արդի խնդիրները եւ դրանց նկատմամբ Թուրքիայի իշխանությունների վերաբերմունքը:

Շվեդիայում Հայաստանի դեսպանատուն է բացվել

25.11.2014



Աշխատությունը խմբագրել է թուրքագետ, պատմական գիտությունների թեկնածու Մելինե Անույան:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](http://www.news.am)

Չորավար Սեպուհի աճյունասափորը նրա կտակից 75 տարի անց ամփոփվեց Եռաբլուրում

20.11.2014

20-րդ դարասկզբի ազգային ազատագրական պայքարի հերոս Չորավար Սեպուհի՝ Արշակ Ներսիսյանի, կտակը 75 տարի անց իրականություն է դարձել. Նյու Յորքից տեղափոխվել է ալյուր՝ նոյեմբերի 20-ին «Եռաբլուր» գինվորական պանթեոնում է ամփոփվել նրա աճյունասափորը: Այս միջոցառումը իրականացվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակում՝ Արշակ Ներսիսյանի աճյունասափորը հայրենիք է տեղափոխվել Պաշտպանության նախարարության ջանքերով ([Ֆոտոռեպորտաժ](http://www.armenianews.am)):

«Թեև հանգամանքների բերումով նա բռնեց տարագրության ուղին, բայց որպես իսկական գինվոր երբեք չդառնացավ հայրենիքից եւ կտակեց վերաթաղվել ալյուր եւ ալյուր մենք կատարում ենք մեծ ֆիդայու եւ հրամանատարի վերջին կամքը: Նա ալյուր կհանգչի մի բարձունքում ուր հանգչում է իր հրամանատարը՝ Չորավար Անդրանիկը», - աճյունասափորի ամփոփման հանդիսավոր ամփոփման միջոցառման ժամանակ ասաց ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Հայաստանում գտնվող Չորավար Սեպուհի թոռ Էդվարդ Պիրանյանը շնորհակալությունը հայտնեց Պաշտպանության նախարարությանը, ՀՀ նախագահին Չորավար Սեպուհի վերջին կամքը կատարելու համար:

Աճյունասափորը ամփոփվելիս հոգեհանգստյան արարողություն կատարվեց հոգեհոգիների կողմից:

Միջոցառմանը մասնակցում էին Սեպուհի Չորավարի հարազատները, որոնք ժամանել էին ԱՄՆ-ից, բարձրաստիճան գինվորականներ, հոգեհոգիներ մեծ թվով ուսանողներ բուհերից:

Միջոցառման ավարտին Սեյրան Օհանյանը բարձրաստիճան գինվորականների հետ ծաղիկներ դրեց Սպարապետ Վազգեն Սարգսյանի, Չորավար Անդրանիկի շիրիմներին:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](http://www.news.am)

Ստոկհոլմի պատմական Ազնվականության պալատում՝ Ռիդդարիյուսթերում, նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ Շվեդիայում Հայաստանի Հանրապետության դեսպանության պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին Շվեդիայի կառավարության եւ արտգործնախարարության բարձրաստիճան ներկայացուցիչներ, Ռիկսդագի անդամներ, Ստոկհոլմում հավատարմագրված դեսպաններ, հասարակական գործիչներ, շվեդահայ համայնքի ներկայացուցիչներ:

ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, թե հանդիսությանը ելույթներով հանդես եկան ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը եւ Շվեդիայի ռազմավարական զարգացման նախարար Քրիստինա Պերսոնը:

Իր խոսքում նախարար Նալբանդյանը, անդրադառնալով հայ-շվեդական հարաբերությունների անցյալին եւ ներկային, ասաց.

«Բարձրացնելով Հայաստանի դրոշը Շվեդիայի Թագավորության մայրաքաղաքում՝ նշանավորելու հայկական դեսպանության պաշտոնական բացումը, մենք արտահայտում ենք մեր ձգտումը՝ նոր մակարդակի բարձրացնելու երկկողմ հարաբերությունները:

Չնայած այն հանգամանքին, որ հայ-շվեդական դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 22 տարի առաջ, կան բազմաթիվ վկայություններ, որ մեր ժողովուրդները առնչվել են դեռ վաղ միջնադարից: 16-17 դարերում՝ Արեւելքը Շվեդիային կապող առևտրական ճանապարհը հայ վաճառականների ակտիվության շնորհիվ հաճախ կոչվել է «Հայկական ճանապարհ»: Շվեդիայի պատմության ընթացքում հայտնի են հայ ծագումով դիվանագետներ, գիտնականներ»:

Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը նշեց. «Հայ ժողովուրդը երախտագիտությամբ է հիշում Ալմա Յոհանսոնի եւ շվեդ այլ միսիոներների, որոնք օգնության ձեռք են մեկնել Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության վերապրածներին: Այս համատեքստում կցանկանայի եւս մեկ անգամ մեր շնորհակալությունը հայտնել Շվեդիայի խորհրդարանին՝ Ռիկսդագին, 2010թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համար»:

Նախարար Նալբանդյանը կարեւորեց նաեւ շվեդահայ համայնքի դերակատարությունը՝ որպես Հայաստանը եւ Շվեդիան կապող օղակ:

Դեսպանության բացման առիթով Ազնվականների միության արխիվից հանդիսությունների սրահում ցուցադրման էր ներկայացված ծագումով հայ շվեդ դիվանագետ Իգնատիուս Մուրադջանյանին 1780թ. ազնվականի տիտղոս շնորհելու Շվեդիայի արքայական հրովարտակը, ինչպես նաև այլ պատմական փաստաթղթեր:

Միջոցառմանը հայ եւ շվեդ հեղինակների կատարումներով հանդես եկավ հայ երաժիշտների լարային քառյակը:

Բացի քաղաքական օրակարգից նախարար Նալբանդյանի այցը Շվեդիա ներառում էր նաև տնտեսական բաղադրիչ: Էդվարդ Նալբանդյանը հանդիպում ունեցավ բանկային, էներգետիկ, բարձր տեխնոլոգիաների, կապի, առողջապահական, պարենի ոլորտները ներկայացնող ընկերությունների ներկայացուցիչներին, որոնց պատմեց Հայաստանում ներդրումային հնարավորությունները, կառավարության կողմից իրականացվող տնտեսական զարգացման ծրագրերը: Շվեդական գործարար շրջանակների ներկայացուցիչները պատմեցին Հայաստանում իրենց ընկերությունների կողմից իրականացվող գործունեության եւ համագործակցության հեռանկարային ծրագրերի մասին: Քննարկվեցին նաև հայ-շվեդական գործարար համաժողովների, ինչպես նաև՝ տնտեսական ոլորտի պատասխանատուների փոխայցելությունների կազմակերպման հնարավորությունները:

Նոյեմբերի 24-ի երեկոյան Էդվարդ Նալբանդյանը Հայաստանի դեսպանությունում հանդիպեց շվեդահայ համայնքի ներկայացուցիչներին: Ջերմ եւ անմիջական մթնոլորտում կայացած հանդիպմանը նախարար Նալբանդյանը ներկայացրեց Հայաստանի արտաքին քաղաքականությունը, դարաբաղյան հիմնահարցի հանգուցալուծման ուղղությամբ գործադրվող ջանքերը, Եվրասիական միությանը Հայաստանի անդամակցության գործընթացը, Եվրոպական միություն – Հայաստան համագործակցությունը, պատասխանեց ներկաների բազմաթիվ հարցերի:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Արցախ

Վարժանքի ժամանակ ադրբեջանական կողմը խոցել է ԼՂՀ բանակի ուղղաթիռը

16:06, 12.11.2014



Նոյեմբերի 12-ին, դարաբաղա-ադրբեջանական սահմանի արևելյան հատվածի օդային տարածքում ժամը 13.45-ի սահմաններում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական ՉՈՒ-ի կողմից հրադադարի ռեժիմի

խախտման արդյունքում խոցվել է ԼՂՀ ՌՕՈւ ՄԻ-24 ուղղաթիռը:

ԼՂՀ ՊՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ խոցման վայրը շփման գծին չափազանց մոտ է:

Հակառակորդը շարունակում է տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից ինտենսիվ կրակ վարել դեպքի վայրի ուղղությամբ:

Միջադեպի մանրամասները ճշտվում են:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Հայտնի է խոցված ուղղաթիռի հրամանատարի անունը

12.11.2014



Ուսումնավարժական թռիչք կատարելու ընթացքում ադրբեջանցիների կողմից խոցված հայկական ուղղաթիռի հրամանատարն էր մայոր Սերգեյ Սահակյանը: Այս մասին «Ֆեյսբուքի» իր էջում գրել է Պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը:

«Արցախի սահմանին ադրբեջանական կողմից աննախադեպ սադրանք է տեղի ունեցել, որը հանգեցրել է նաև իրավիճակի լարման: Անմիտ են ադրբեջանական կողմի այն հերյուրանքները, թե իբր հայկական ուղղաթիռները գրոհ են իրականացրել իրենց դիրքերի ուղղությամբ եւ իրենք պատասխանել են: Ուղղաթիռի բեկորների ուսումնասիրությունը թույլ կտա հաստատել, որ ուղղաթիռը զինված չի եղել: Իրավիճակի այս լարումը ադրբեջանական կողմից շարունակվում էր, երբ ուղղաթիռը արդեն ընկած էր: Ավելին՝ ադրբեջանական կողմի կրակահերթըրը նաև թույլ չէր տալիս, որ անգամ օդաչուներին մոտենան: Այս աննախադեպ լարման հետեւանքները ադրբեջանական կողմի համար շատ ցավոտ կլինեն եւ կմնան Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության խղճին: Ուղղաթիռի հրամանատարն էր մայոր Սերգեյ Սահակյանը: Անձնակազմի հետագա ճակատագրի մասին տեղեկություններ կհայտնենք», -ասել է նա:

Հիշեցնենք, որ ԼՂՀ ՊՆ-ի փոխանցմամբ՝ այսօր դարաբաղա-ադրբեջանական սահմանի արևելյան հատվածի օդային տարածքում ժամը 13.45-ի սահմաններում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական ՉՈւ-ի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում խոցվել է ԼՂՀ ՌՕՈւ «ՄԻ-24» ուղղաթիռը: Խոցման վայրը շփման գծին չափազանց մոտ է: Հակառակորդը շարունակում է տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից ինտենսիվ կրակ վարել դեպքի վայրի ուղղությամբ: Նախնական տեղեկություններով՝ երեք օդաչու գոհվել է:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Խոցված ուղղաթիռը ընկել է Ակնայի սահմանին, ադրբեջանցիները գնդակոծում են տարածքը

12.11.2014



Ուսումնավարժական թռիչք կատարելու ընթացքում ադրբեջանցիների կողմից խոցված հայկական ուղղաթիռը ընկել է Ակնայի սահմանագծի վրա: Այս մասին հայտնեցին NEWS.am-ի աղբյուրները:

Մեր տեղեկություններով՝ դեպքից հետո ադրբեջանցիները անընդհատ գնդակոծում են տարածքը, թույլ չեն տալիս, որպեսզի հայկական կողմը մոտենա: Չի բացառվում է, որ դիակները հանձնելու խնդրով մեր ռազմական ղեկավարությունը դիմի Ադրբեջանին:

Հիշեցնենք, որ ԼՂՀ ՊՆ-ի փոխանցմամբ՝ այսօր դարաբաղաադրբեջանական սահմանի արեւելյան հատվածի օդային տարածքում ժամը 13.45-ի սահմաններում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական ՁՈւ-ի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում խոցվել է ԼՂՀ ՌՕՈւ «Մի-24» ուղղաթիռը: Խոցման վայրը շփման գծին չափազանց մոտ է: Հակառակորդը շարունակում է տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից ինտենսիվ կրակ վարել դեպքի վայրի ուղղությամբ: Նախնական տեղեկություններով երեք օդաչու գոհվել է, ուղղաթիռի հրամանատարն էր մայոր Սերգեյ Սահակյանը:

Խոցված ուղղաթիռը ռազմական չի եղել, որեւէ զենք-զինամթերք չի կրել. Դավիթ Բաբայան

12.11.2014



Ուսումնավարժական թռիչք կատարելու ընթացքում ադրբեջանցիների կողմից խոցված հայկական ուղղաթիռն ընկել է չեզոք գոտի, այն որեւէ ռազմական գործողություն չէր իրականացնում, իսկ հակառակորդն էլ խոցել է հետեւից: Այս

մասին NEWS.am-ին ասաց Արցախի նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանը:

«Իրավիճակն ընդհանուր առմամբ կայուն է, սադրիչ գործողություն է տեղի ունեցել: Այս պահին դեռ ադրբեջանական կողմը կրակի տակ է պահում այդ տարածքը եւ հնարավոր չէ մոտենալ ուղղաթիռին, հստակ տեղեկություններ չկան՝ անձնակազմի 3 անդամները ողջ են, թե ոչ: Նշենք, որ ուղղաթիռը որեւէ ռազմական գործողություն չէր իրականացնում, որեւէ զենք կամ զինամթերք չէր կրում, այն ռազմական տեխնիկա չի եղել, ընդամենը թռչող օբյեկտ է եղել եւ խոցվել է հետնամասից, ինչը հատուկ է հենց ադրբեջանցիներին: Սաֆարովյան կացնային դիվանագիտության շարունակությունն է սա: Ադրբեջանն ահաբեկիչների եւ մոլագարների պետություն է», - ասաց Դավիթ Բաբայանը:

Նրա խոսքով՝ այսօր տեղի ունեցած դեպքը որեւէ կերպ չի ազդելու գորավարժությունների ընթացքի վրա:

Հիշեցնենք, որ ԼՂՀ ՊՆ-ի փոխանցմամբ՝ այսօր դարաբաղաադրբեջանական սահմանի արեւելյան հատվածի օդային տարածքում ժամը 13.45-ի սահմաններում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական ՁՈւ-ի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում խոցվել է ԼՂՀ ՌՕՈւ «Մի-24» ուղղաթիռը: Խոցման վայրը շփման գծին չափազանց մոտ է: Հակառակորդը շարունակում է տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից ինտենսիվ կրակ վարել դեպքի վայրի ուղղությամբ: Նախնական տեղեկություններով՝ երեք օդաչու գոհվել է, ուղղաթիռի հրամանատարն էր մայոր Սերգեյ Սահակյանը:

Lurper Հայաստանից - NEWS.am

ԵԿՄ-ի կոչը՝ ադրբեջանցիների կողմից խոցված ուղղաթիռի վերաբերյալ

12.11.2014



«Երկրապահ կամավորների միությունը» զգուշացնում է Ադրբեջանին, որ անվերջ եւ անսպառ չէ իրենց համբերությունը, ինչպես նաեւ խնդրում է ԼՂՀ եւ ՀՀ նախագահներին վստահել իրենց կարողություններին եւ համարձակորեն տալ ռազմական առաջադրանք, հենց որ դրա համար ճիշտ պահը կլինի: Այս մասին հայտարարություն է տարածել ԵԿՄ-ն՝ անդրադառնալով այսօր՝ նոյեմբերի 12-ին, ուսումնավարժական թռիչք կատարելու ընթացքում ադրբեջանցիների կողմից խոցված հայկական ուղղաթիռի դեպքին:

«Եռասներուդ Երկրապահ կամավորականների միության, Հանրապետության բոլոր երկրապահների, 5-րդ բրգադիր մարտիկների, երիտասարդ, պատանի երկրապահների եւ անձամբ իմ անունից ցավակցություն եմ հայտնում ռազմասուսումնական վարժանքներ իրականացնելիս Արցախի Պաշտպանության բանակի ՄԻ-24 ուղղաթիռի՝ Ադրբեջանի ՉՈՒ կողմից խոցվելու փաստի կապակցությամբ: Վշտակցելով Ադրբեջանի այս անսխալեղ սադրանքին զոհ գնացած քաջ հայորդիների հարազատներին, մեր ժողովրդին, ՀՀ եւ Արցախի նախագահներին եւ պաշտպանության նախարարներին՝ միաժամանակ համոզված եմ, որ մեր հերոս տղաների հոգիները պատվավոր տեղ են գտնելու դրախտում, իսկ նրանց օրինակով դաստիարակվելու են սերունդներ: ԵԿՄ-ն նաեւ զգուշացնում է Ադրբեջանի քաղաքական եւ ռազմական ղեկավարությանը, որ անվերջ ու անսպառ չէ մեր համբերությունը: Հավատացած եղեք, որ եթե մեզ փորձեք պատերազմ պարտադրել, եթե ձգտեք նմանօրինակ սադրանքներ հրահրել, խստորեն պատժվելու եք, դարձյալ, ինչպես 1994-ի մայիսին, ծնկաչոք հրադադար եք մուրալու, բայց այս անգամ արդեն մարտերն ընթանալիս կլինեն Բաքվում:

Հանրապետության բոլոր երկրապահ կամավորականները, Արցախյան պատերազմի վետերանները պատրաստակամ են անհրաժեշտ պահին, զենքը ձեռքին, կանգնել սահմանային առաջնագծում՝ երաշխավորելու համար Հայաստանի եւ հայկական Արցախի պետության բնակիչների անդորրը: Խնդրում եմ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին եւ Արցախի անվտանգության երաշխավոր Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին վստահել մեր կարողություններին եւ համարձակորեն տալ ռազմական առաջադրանք հենց որ դրա համար ճիշտ պահը կլինի: Երկրապահը միշտ եղել է եւ այսօր էլ պատրաստ է կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում», - ասվում է ԵԿՄ նախագահ Մանվել Գրիգորյանի կոչում:

Հիշեցնենք, որ ԼՂՀ ՊՆ-ի փոխանցմամբ՝ այսօր դարաբաղադրեջանական սահմանի արեւելյան հատվածի օդային տարածքում ժամը 13.45-ի սահմաններում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական ՉՈՒ-ի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում խոցվել է ԼՂՀ ՌՕՈՒ «Մի-24» ուղղաթիռը: Խոցման վայրը շփման գծին չափազանց մոտ է: Հակառակորդը շարունակում է տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից ինտենսիվ կրակ վարել դեպքի վայրի ուղղությամբ: Նախնական տեղեկություններով երեք օդաչու զոհվել է, ուղղաթիռի հրամանատարն էր մայոր Սերգեյ Սահակյանը:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Ադրբեջանի բանակը երկու զոհ է տվել. նրանք փորձում էին մոտենալ խոցված ուղղաթիռին

22.11.2014

Հայկական ուղղաթիռի անկման վայրում նոյեմբերի 20-ի լույս 21-ի գիշերը հայկական կողմի կրակոցների արդյունքում Ադրբեջանի բանակը երկու զոհ է տվել: Այս մասին [NEWS.am](#)-ին հայտնեցին Պաշտպանության նախարարության աղբյուրները:

Չոհերից մեկը լուսարձակող էր, մյուսը՝ դիպուկահար: Նրանք փորձում էին մոտենալ խոցված ուղղաթիռին, սակայն հայկական կողմը կանխել է դա:

Հիշեցնենք, որ ԼՂՀ ՊՆ-ի փոխանցմամբ՝ դարաբաղադրեջանական սահմանի արեւելյան հատվածի օդային

տարածքում նոյեմբերի 12-ին, ժամը 13.45-ի սահմաններում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական ՉՈՒ-ի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում խոցվել է ԼՂՀ ՌՕՈՒ «Մի-24» ուղղաթիռը:



Խոցման վայրը շփման գծին չափազանց մոտ է: Հակառակորդը շարունակում է տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից ինտենսիվ կրակ վարել դեպքի վայրի ուղղությամբ: Նախնական տեղեկություններով՝ երեք օդաչու զոհվել է, ուղղաթիռի հրամանատարն էր մայոր Սերգեյ Սահակյանը, մահացած մյուս երկու զինծառայողներն են լեյտենանտ Ազատ Սահակյանը եւ ավագ լեյտենանտ Սարգիս Նազարյանը:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

ԼՂՀ զինված ուժերը հատուկ գործողությամբ դուրս են բերել օդաչուների մարմինները

22.11.2014



Հաշվի առնելով ադրբեջանական կողմի պաշտոնական հայտարարություններն ու բանականության իսպառ բացակայությունը, ԼՂՀ զինված ուժերը ստիպված դիմել են նոյեմբերի 12-ին հակառակորդի կողմից խոցված ուղղաթիռի անձնակազմի ճակատագիրը անկման վայրում պարզելու և դրանից բխող խնդիրները լուծելու հատուկ նշանակության գործողության: Այս մասին հաղորդում է ԼՂՀ ՊՌ Լրատվության և քարոզչության բաժինը:

Մարտական խնդրի կատարման արդյունքում դեպքի վայրից տարհանվել են ուղղաթիռի անձնակազմից մեկի դին,

երկու օդաչուների մասունքները և ուղղաթիռի որոշ անհրաժեշտ մասեր:

«Հատուկ նշանակության գործողության ընթացքում շարքից հանվել է հակառակորդի երկու ասկյար: Պաշտպանության բանակի կողմից կորուստներ չեն եղել»,- ասվում է հաղորդագրությունում:

Նշենք, որ խոցված ուղղաթիռի զոհված երեք օդաչուներն են ուղղաթիռի հրամանատար մայոր Սերգեյ Սահակյանը, երկու զինծառայողներ, լեյտենանտ Ազատ Սահակյանը և ավագ լեյտենանտ Սարգիս Նազարյանը:

Հիշեցնենք, որ ԼՂՀ ՊՆ-ի փոխանցմամբ՝ դարաբաղա-ադրեջանական սահմանի արևելյան հատվածի օդային տարածքում նոյեմբերի 12-ին, ժամը 13.45-ի սահմաններում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական ՁՈՒ-ի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում խոցվել է ԼՂՀ ՌՕՈՒ «Մի-24» ուղղաթիռը: Խոցման վայրը շփման գծին չափազանց մոտ էր: Հակառակորդը շարունակում էր տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից ինտենսիվ կրակ վարել դեպի վայրի ուղղությամբ՝ թույլ չտալով մոտենալ ուղղաթիռի անկման վայրին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Կատարվել է համաշխարհային մակարդակի փայլուն գործողություն. Արծրուն Հովհաննիսյան

22.11.2014

ԼՂՀ հատուկ նշանակության ուժերը համաշխարհային մակարդակի փայլուն գործողություն են կատարել՝ դուրս բերելով նոյեմբերի 12-ին խոցված ուղղաթիռի օդաչուների մարմինները: Այս մասին Ֆեյսբուքյան իր էջում գրել է ՀՀ Պաշտպանության նախարարության մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը:

«Հաշվի առնելով հակառակորդի չափազանց մեծ կրակային և այլ հակազդեցությունները, այս գործողությունները բնույթով և բարդությամբ աննախադեպ էին: Կատարողականությունը ուղղակի փայլուն է՝ հաշվի առնելով նաև հակառակորդի ոչ փոքր կորուստները, որոնք ծուղակ էին սարքել: Դեռ մի քանի օր կլսենք նրանց անունները, որոնք բնականաբար մահացած կլինեն տարբեր դժբախտություններից: ԼՂՀ հատուկ նշանակության ուժերը իրենց տոնի օրը փայլեցին, փառք նրանց: Կատարվել է համաշխարհային մակարդակի փայլուն գործողություն, իսկ սև հրանոթները լուռ են», - գրել է Արծրուն Հովհաննիսյանը:

Ավելի վաղ NEWS.am-ը հաղորդել էր, որ մարտական խնդրի կատարման արդյունքում դեպի վայրից տարհանվել են ուղղաթիռի անձնակազմից մեկի դին, երկու օդաչուների մասունքները և ուղղաթիռի որոշ անհրաժեշտ մասեր:

Նշենք, որ խոցված ուղղաթիռի զոհված երեք օդաչուներն են ուղղաթիռի հրամանատար մայոր Սերգեյ Սահակյանը, երկու զինծառայողներ, լեյտենանտ Ազատ Սահակյանը և ավագ լեյտենանտ Սարգիս Նազարյանը:

Հիշեցնենք, որ ԼՂՀ ՊՆ-ի փոխանցմամբ՝ դարաբաղա-ադրեջանական սահմանի արևելյան հատվածի օդային տարածքում նոյեմբերի 12-ին, ժամը 13.45-ի սահմաններում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական ՁՈՒ-ի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում խոցվել է ԼՂՀ ՌՕՈՒ «Մի-24» ուղղաթիռը: Խոցման վայրը շփման գծին չափազանց մոտ էր: Հակառակորդը շարունակում էր տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից ինտենսիվ կրակ վարել դեպի վայրի ուղղությամբ՝ թույլ չտալով մոտենալ ուղղաթիռի անկման վայրին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Խոցված ուղղաթիռի օդաչուները հետմահու պարգևատրվել են «Արիության համար» մեդալով

22.11.2014



Ադրբեջանական ուժերի կողմից խոցված հայկական ուղղաթիռի օդաչուները հետմահու պարգևատրվել են «Արիության համար» մեդալով: Այս մասին հայտնում է Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունը:

«Նախագահ Բակո Սահակյանը նոյեմբերի 22-ին ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ «Արիության համար» մեդալով հետմահու պարգևատրվել են Ադրբեջանի զինված ուժերի կողմից հրադադարի ռեժիմը խախտելու հետևանքով ուսումնավարժական թռիչքի ժամանակ խոցված ԼՂՀ ռազմական օդուժի Մի-24 ուղղաթիռի անձնակազմի անդամներ մայոր Սերգեյ Սահակյանը, ավագ լեյտենանտ Սարգիս Նազարյանը, լեյտենանտ Ազատ Սահակյանը»,- ասվում է հաղորդագրությունում:

Ավելի վաղ NEWS.am-ը հաղորդել էր, որ մարտական խնդրի կատարման արդյունքում դեպի վայրից տարհանվել են ուղղաթիռի անձնակազմից մեկի դին, երկու օդաչուների մասունքները և ուղղաթիռի որոշ անհրաժեշտ մասեր:

Հիշեցնենք, որ ԼՂՀ ՊՆ-ի փոխանցմամբ՝ դարաբաղա-ադրեջանական սահմանի արևելյան հատվածի օդային տարածքում նոյեմբերի 12-ին, ժամը 13.45-ի սահմաններում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական ՁՈՒ-ի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում խոցվել է ԼՂՀ ՌՕՈՒ «Մի-24» ուղղաթիռը: Խոցման վայրը շփման գծին չափազանց մոտ էր: Հակառակորդը շարունակում էր տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից ինտենսիվ կրակ վարել դեպի վայրի ուղղությամբ՝ թույլ չտալով մոտենալ ուղղաթիռի անկման վայրին: Հաշվի առնելով ադրբեջանական կողմի պաշտոնական հայտարարություններն ու բանականության իսկառ բացակայությունը, ԼՂՀ զինված ուժերը ստիպված դիմել են նոյեմբերի 12-ին հակառակորդի կողմից խոցված ուղղաթիռի անձնակազմի ճակատագիրը անկման վայրում պարզելու և դրանից բխող խնդիրները լուծելու հատուկ նշանակության գործողության: Այս մասին հաղորդել է ԼՂՀ ՊԲ Լրատվության և քարոզչության բաժինը: Մարտական խնդրի կատարման արդյունքում դեպի վայրից տարհանվել են ուղղաթիռի անձնակազմից մեկի դին, երկու օդաչուների մասունքները և ուղղաթիռի որոշ անհրաժեշտ մասեր:

«Հատուկ նշանակության գործողության ընթացքում շարքից հանվել է հակառակորդի երկու ասկյար: Պաշտպանության բանակի կողմից կորուստներ չեն եղել»,- ասվում է հաղորդագրությունում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Խոցված ուղղաթիռի շրջանում հատուկ գործողությունը տեսել է մի քանի օր. աղբյուր

22.11.2014



Խոցված ուղղաթիռի շրջանում ԼՂՀ ՉՈՒ հատուկ գործողությունը շարունակվել է մի քանի օր, [NEWS.am](#)-ի թղթակցին հայտնել է իրագեկ աղբյուրը:

Ըստ նրա՝ գործողությունը բարդացնում է այն, որ ուղղաթիռի բեկորները ցաքուցրիվ եղած էին զգալի տարածքում: «Աղբրեջանական կողմը հերքում է հատուկ գործողության փաստը եւ, բնականաբար, կորուստները, բայց իրականում հակառակորդի կորուստները զգալի են եղել», - հայտնել է աղբյուրը:

Հիշեցնենք, նոյեմբերի 12-ին Աղբրեջանի ՉՈՒ-ն խոցել էր ԼՂՀ ՉՈՒ ուսումնավարժական թռիչք իրականացնող ՄԻ-24 ուղղաթիռը: Դրանից հետո աղբրեջանական ՉՈՒ-ն անընդհատ կրակի տակ էր պահում ուղղաթիռի ընկնելու վայրը՝ մոտ չթողնելով ՀՀ եւ ԼՂՀ, ինչպես նաեւ ԵԱՀԿ եւ ԿԽՄԿ ներկայացուցիչներին:

Հաշվի առնելով Աղբրեջանի կողմից ինչ-որ մեկին ուղղաթիռին մոտ թողնելու կտրուկ մերժումները, ԼՂՀ ՊԲ հրամանատարությունը որոշել էր հատուկ գործողություն անցկացնել, որի արդյունքում հաջողվել էր դուրս բերել զոհված երեք օդաչուներից մեկի դին եւ մյուսների մասունքները, ինչպես նաեւ ուղղաթիռի անհրաժեշտ մասեր, որոնք կուղարկվեն փորձաքննության:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Պետք է մի անգամ էլ նրանց հարված հասցրել. Կոմանդոս

24.11.2014



Պետք է ոչինչ չասել, ուղղակի հպարտանալ եւ ծափահարել, դա հրաշք չէ, դա իրողություն է: Այս մասին [NEWS.am](#)-ի թղթակցի հետ զրույցում ասաց գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը:

Նա նշեց, որ այս պատասխանը ցավոք դաս չի լինի Աղբրեջանի համար, որն էլի ոտնձգություններ կանի մեր զինված ուժերի նկատմամբ: «Լավ կլիներ, որ մենք մի անգամ էլ պատասխան տայինք, չսպասեինք իրենց, իրենք միշտ խախտում են հրադադարը, դիվերսիոն խմբեր են ուղարկում, այնպես որ պետք է մի անգամ էլ նրանց հարված հասցրել», - ասաց նա:

Կոմանդոսը շեշտեց, որ մի վայրկյան չի կասկածել, որ խոցված ուղղաթիռի անձնակազմին հայկական կողմը հետ կբերի: Նա շեշտեց, որ Աղբրեջանում ազգային, կրոնական հակասություններ կան, մի խավը մյուսին չի հասկանում, ինչը ազդում է բանակի բրա:

Ավելի վաղ [NEWS.am](#)-ը հաղորդել էր, որ հաշվի առնելով Աղբրեջանի կողմից ինչ-որ մեկին ուղղաթիռին մոտ թողնելու կտրուկ մերժումները, ԼՂՀ ՊԲ հրամանատարությունը մարտական խնդրի կատարման արդյունքում դեպքի վայրից տարահանել է ուղղաթիռի անձնակազմից մեկի դին, երկու օդաչուների մասունքները եւ ուղղաթիռի որոշ անհրաժեշտ մասեր: Աղբրեջանական կողմը լուրջ կորուստներ է ունեցել, տարահանման գործողության արդյունքում հայկական կողմից ոչ ոք չի տուժել:

Հիշեցնենք, որ ԼՂՀ ՊՆ-ի փոխանցմամբ՝ դարաբաղա-աղբրեջանական սահմանի արեւելյան հատվածի օդային տարածքում նոյեմբերի 12-ին, ժամը 13.45-ի սահմաններում ուսումնավարժական թռիչքի ժամանակ աղբրեջանական ՉՈՒ-ի կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում խոցվել էր ԼՂՀ ՌՕՈՒ «ՄԻ-24» ուղղաթիռը: Խոցված ուղղաթիռի զոհված երեք օդաչուներն են ուղղաթիռի հրամանատար մայոր Սերգեյ Սահակյանը, երկու զինծառայողներ, լեյտենանտ Ազատ Սահակյանը եւ ավագ լեյտենանտ Սարգիս Նազարյանը:

Մասնագետ. Հյուսիսային Ղարաբաղում 2600 հայկական հուշարձաններ կային

25.11.2014



1980 – 1988թթ. Հյուսիսային Ղարաբաղի տարածքում դեռեւս շուրջ 2600 հայկական հուշարձաններ կային: Այս մասին նոյեմբերի 25-ին Հյուսիսային Ղարաբաղի թեմայով քննարկումների ընթացքում հայտարարել է հուշարձանագետ Սամվել Կարապետյանը: Քննարկումը կազմակերպել էր Աղբրեջանի ԽՍՀ-ից փախստականների համագումարի նախագահությունը, այն նվիրված էր Հյուսիսային Ղարաբաղից հայերի արտաքսման 26-րդ տարեիցին:

Մինչեւ 1988թ. վերջ, ըստ Կարապետյանի, Հյուսիսային Ղարաբաղում գրեթե 50 հայկական գյուղ կար:

«Աղբրեջանի իշխանություններն այստեղ հայկական հուշարձանների «մաքրում» էին իրականացնում: Ուրիշի տարածքում իրենց հայրենիքը կերտելու ճանապարհին աղբրեջանցիները մնում են այն կարծիքին, որ նախորդ

ժողովրդից մնացած հուշարձանները իրենց խանգարում են՝ վկայելով ճշմարտության մասին»,- նշել է Մամվել Կարապետյանը: Նրանք այնքան հիմար են, հավելել է փորձագետը, որ եւ ավերում են հուշարձանները, եւ այդ յուսանկարները համացանցում գետեղում:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

ԼՂՀ-ի Քաշաթաղի շրջանի բնակչության թվաքանակն աճել է



2010թ.-ից սկսած Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի բնակչության թվաքանակը 7-8 հազարից հասել է 11 հազարի: Այդ մասին այսօր՝ նոյեմբերի 1-ին, մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջանի սոցիալական ապահովության վարչության պետ Վարդան Բաղդասարյանը:

Նրա խոսքով՝ շնորհիվ ԼՂՀ-ի կառավարության քաղաքականության, Քաշաթաղի շրջանում բավականին դրական միտումներն են արձանագրվում: «Ստորագրվել է ծնելիությունն ու բազմազավակությունը խթանող ծրագրերի փաթեթ, որտեղ հաստատվել են նպաստների, ինչպես նաև երեխայի ծնունդի ժամանակ միանվագ վճարումների կոնկրետ գումարային չափերը: Ընտանիքում 6 եւ ավելի երեխաների ծնվելու դեպքում այդ ընտանիքի համար պետության հաշվին մասնավոր տուն է կառուցվում: Ընտանիքում 4-րդ երեխայից սկսած՝ նպաստը կազմում է 15 հազար դրամ», - նշեց Վարդան Բաղդասարյանը:

Քաշաթաղում երեխայի ծնվելու ժամանակ միանվագ վճարվում է 100 հազար դրամ, երկրորդ երեխայի ժամանակ՝ 200 հազար դրամ, երրորդի դեպքում՝ 500 հազար դրամ եւ բանկում 500 հազար դրամի չափով հաշիվ է բացվում: «Այս ծրագիրը նպաստեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանում վերաբնակեցման եւ բնակչության թվաքանակի ավելացմանը», - ընդգծեց Վարդան Բաղդասարյանը:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

ԼՂՀ Քաշաթաղի շրջանը մեղր եւ բանջարեղեն կարտահանի ԵՏՄ-ի շուկա

ԼՂՀ Քաշաթաղի շրջանը Հայաստանի հետ նույն տնտեսական գոտում է եւ անպայման կմասնակցի Եվրասիական տնտեսական միության հետ կապված միջոցառումներին: Այս մասին նոյեմբերի 1-ի մամուլի

ասուլիսում հայտնել է ԼՂՀ Քաշաթաղի շրջանի վերաբնակեցման վարչության պետ Ռոբերտ Մաթեոսյանը: Ըստ նրա՝ հոկտեմբերի 31-ին հուշագիր է ստորագրվել Երևանի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարության հետ: «Այդ շրջանի գյուղատնտեսական ապրանքների շուկայում տեղ է հատկացվելու ԼՂՀ-ի Քաշաթաղի շրջանի ապրանքների համար, այսինքն՝ մեր ապրանքները Հայաստանի շուկա կմտնեն, պետք է լուծել միայն տեխնիկական հարցերը: Եվ հայկական շուկայից ռուսական շուկա այդ ապրանքների արտահանման համար նույնպես անհրաժեշտ է միայն տեխնիկական հագեր լուծել», - ընդգծել է Ռոբերտ Մաթեոսյանը: Նա հավելել է, որ ԼՂՀ Քաշաթաղի շրջանի բրենդը մեղրն է:



Մամուլի ասուլիսի մյուս բանախոս, ԼՂՀ Քաշաթաղի շրջանի «Մերան» թերթի գլխավոր խմբագիր Չոհրաբ Ըռոյանն ընդգծել է, որ ԼՂՀ-ն կարող է ԵՏՄ երկրներ էկոլոգիապես մաքուր սննդամթերք արտահանել: «Մենք կարող ենք արտահանել մեղր, բանջարեղեն», - հավելել է նա:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

ԼՂՀ Քաշաթաղի շրջանն արդեն սիրիահայ 28 ընտանիքի է ընդունել



ԼՂՀ Քաշաթաղի շրջանում սիրիահայ 28 ընտանիք է ապրում՝ հիմնականում Կովսականում եւ Իշխանաձորում են:

Այս մասին նոյեմբերի 1-ի մամուլի ասուլիսում հայտնել է ԼՂՀ Քաշաթաղի շրջանի վերաբնակեցման վարչության պետ Ռոբերտ Մաթեոսյանը:

Ըստ նրա՝ սիրիահայ 3 ընտանիքներ բնակվում են ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորում (Լաչին): «Իշխանաձորում եւ Կովսականում նրանք հիմնականում հողագործությամբ են զբաղվում: Պետությունը նրանց գյուղատնտեսական արտոնյալ վարկեր է տրամադրել: Կան սիրիահայերի ընտանիքներ, որոնք անկախ այն բանից, թե ինչպիսին կլինի Սիրիայի հետագա իրավիճակը, կմնան Քաշաթաղում. նրանք իսկական քաշաթաղցիներ են դարձել», - ուրախությամբ ընդգծել է Ռոբերտ Մաթեոսյանը:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջանը սպասում է մասնագետների



Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջանը պատրաստ է Հայաստանից ընդունել ուսուցիչների, բժիշկների, գյուղատնտեսության մասնագետների: Այդ մասին այսօր՝ նոյեմբերի 1-ին, մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջանի վերաբնակեցման վարչակազմի ղեկավար Ռոբերտ Մաթեոսյանը:

Նրա խոսքով՝ ԼՂՀ-ի կառավարության՝ վերաբնակեցման մասին որոշումը բավականին շատ առավելություններ է սահմանում վերաբնակեցվող ընտանիքների համար. ցածր տոկոսադրույքներով վարկեր, առանձնաշենք, շինարարական նյութեր: «Սակայն հաշվի առնելով այդ առավելությունները, իմ կարծիքով, վերաբնակեցման տեմպերը բավականին ցածր են», - նշեց Ռոբերտ Մաթեոսյանը: «Պատճառը հիմնականում տեղեկացվածության ցածր մակարդակն է: Մարդիկ հաճախ ինձ զանգում եւ հարցնում են՝ ձեր մոտ արդյոք կրակո՞ւմ են, թե՞ ոչ: Այսինքն մարդիկ վախենում են, որ սա սահմանամերձ շրջան է: Սակայն ես բացատրում եմ, որ Հայաստանի Արարատի մարզը շատ ավելի մոտ է սահմանին, քան Քաշաթաղի շրջանը»:

Ռոբերտ Մաթեոսյանը նաեւ հավելեց, որ շուտով Բերձորում (Քաշաթաղի շրջանի վարչակն կենտրոն՝ խմբ.) նոր հիվանդանոց կկառուցվի: «Եվ մենք մասնագետների կարիք կունենանք», - ընդգծեց նա:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Արեւմտյան Հայաստան

Դերսիմի 1937 թվականի ապստամբության առաջնորդը հայ էր. թուրքական մամուլ
21.11.2014



Թուրքիայում Դերսիմի կոտորածի թեման կրկին շրջանառության մեջ դնելուց հետո մամուլում հայտնվել են դեռեւս Դերսիմի կոտորածների ժամանակ թուրքական թերթերում Դերսիմի ապստամբության առաջնորդ Սեյիթ Ռեզայի ազգային ծագման մասին հրապարակված հակասական տեղեկությունները:

Թուրքական Ohaber կայքի փոխանցմամբ՝ Դերսիմի կոտորածների ժամանակ թուրքական մամուլում գերիշխում էր այն տեսակետը, թե Դերսիմի ապստամբության հետեւում հայերն են կանգնած, իսկ ապստամբության առաջնորդ եւ խորհրդանիշ Սեյիթ Ռեզան հայ է:

Թուրքիայում ցանկացած անհանսկանալի իրադարձության ժամանակ միանգամից հայերին հիշող թուրքական պարբերականներից Cumhuriyet-ի 1937-ի հունիսի 28-ի համարում նշվում է, թե իբր Դերսիմի ապստամբությունը հրահրելու մեղադրանքով Խորեն անունով հայ է ձերբակալվել:

Բացի այդ, այդ օրերին թուրքական մամուլում մեծ թիվ են կազմել հրապարակումներում Սեյիթ Ռեզային հայ ներկայացնողները: 1937-ի նոյեմբերի 8-ի Haber gazetesi պարբերականում նշվել է, թե Սեյիթ Ռեզան քրիստոնյա է եւ նրա վրանում խաչ է հայտնաբերվել:

Այլ թերթեր ավելի առաջ էին գնացել՝ պնդելով, թե բացի խաչից, հայտնաբերվել է նաեւ հայերենով գիրք, հայերեն գրություններով խաչեր եւ Քրիստոսի մատուներին:

Նշենք, որ Սեյիթ Ռեզան ծնվել է Դերսիմի գյուղերից մեկում, հանդիսացել է ալեւի-զազա ցեղերից մեկի առաջնորդը, գլխավորել թուրքական պետության դեմ ապստամբությունները: 1937 թվականի սեպտեմբերի 5-ից 13-ը Էլազըղում ռազմական դատարանի կողմից իրականացրած դատավարության վերջում դատապարտվել է մահապատժի, որն ի կատար է ածվել 1937-ի նոյեմբերի 15-ին:

Հիշեցնենք, որ Դերսիմի ապստամբությունը թուրքական իշխանությունները արյան մեջ են խեղդել՝ վերացնելով հազարավոր գյուղեր: Տարբեր աղբյուրների հաղորդմամբ՝ Դերսիմի կոտորածներին զոհ է գնացել մինչեւ 100 հազար հոգի:

1915-ի Հայոց ցեղասպանությունից փրկված, եւ Դերսիմի տարբեր գյուղերում պատսպարված հազարավոր հայերը 1938-ին կրկնակի ցեղասպանության ենթարկվեցին:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](#)

Թուրքիայի ՉՈՒ գլխավոր շտաբի կայքից հանվել է Ցեղասպանությունը ժխտող 8 հատորյակը



Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի կայքից հանվել է Հայոց ցեղասպանությունը ժխտող 8 հատոր աշխատությունը:

Ինչպես տեղեկացնում է թուրքական Cumhuriyet-ը՝ Թուրքիայի ՉՈՒ գլխավոր շտաբը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ անակնկալ քայլ է կատարել՝ «Պատմությունից հատվածներ» բաժնից հանելով «Արխիվային փաստաթղթերով հայերի գործունեությունները 1914-1918 թվականներին» 8 հատոր աշխատությունը PDF ֆորմատով:

Հիշյալ աշխատությունը կազմվել է Հայոց ցեղասպանության ժխտման ուղղությամբ Թուրքիայի ՉՈՒ գլխավոր շտաբի զինվորական պատմության եւ ռազմավարական հետազոտությունների վարչությունը (ATASE) 2006-2008 թվականներին եւ ներկայացված է եղել անգլերենով եւ թուրքերենով:

Հիշյալ աշխատությունը հանվել է Թուրքիայի ՉՈՒ գլխավոր շտաբի կայքից եւ հասանելի է միայն ATASE-ի եւ վերահսկողության վարչության կայքում:

Թուրքիայում համշենցիների բնակավայրերի անունները. ցանկ 1

Վերջին շրջանում թե Հայաստանում, թե Թուրքիայում եւ այլուր մեծացել է հետաքրքրությունը Թուրքիայի Մեծուկան տարածաշրջանում բնակվող բռնի մահմեդականացված համշենահայերի նկատմամբ:

Ծնունդով Թուրքիայի Ռիզեի շրջանից Իսմաիլ Գյունեյ Յըմնագն սեփական բլոգում ներկայացրել է իր ուսումնասիրության արդյունքը, որում տարբերակել է մի քանի նահանգներում այն բնակավայրերը, որտեղ ապրում են համշենահայերն ու լազերը: Հեղինակը նաեւ գրել է Ժողովրդի կողմից հիշատակվող անունները եւ նոր անունները:

Հիշյալ ցանկը ներկայացնելուց առաջ հիշեցնենք, որ այն հեղինակի գրածն է եւ կարող է ունենալ բացթողումներ.

ԱՐԴՎԻՆԻ ՆԱՀԱՆԳ. Հոպա կամ Խոփա: Հեղինակը պնդում է, թե այն ավանդաբար լազերի բնակավայրն է եղել, սակայն ներկայում այնտեղ ճնշող մեծամասնությունը համշենցիներն են: Նշվում է, որ Հոպայի համշենցիների լեզուն համշենի լեզուն է (հայերեն-խմբ)



Հոպայի շրջանում համշենցիների գյուղերն են.

